

Խմբագրական

ՔՆՆԱԴԱՏՈՒԹԻՒՆԸ՝ ԱԶԴԱԿ ՅԱՌԱՉԴԻՄՈՒԹԵԱՆ



«Քննադատել՝ հոգեպէս տառապել է նշանակում» - Գարեգին Նժդեհ

Ժամանակի արագընթաց հոսանուտին մէջ, նոր տարեմուտները վերանորոգման հանգրուաններ են՝ ձերբազատուելու ա՛լ քարացած, կոշկոռ կապած ըմբռնումներէ, կարծրատիպերէ, որոնք կը խոչընդոտեն մարդ էակին եւ հանրութեան յառաջընթացն ու զարգացումը, որպէսզի ան կարենայ՝ կենսանորոգ շունչով ընդ առաջ երթալ նոր ժամանակներու հրամայականներուն եւ մարտահրաւերներուն...

Վերանորոգման այս տենդին մէջ, իր էական եւ որոշադրիչ դերը ունի, անկասկած, ինքնաքննադատութիւնը՝ անհատական եւ հաւաքական մակարդակներու վրայ: Ազգային հարթութեան վրայ, ուշագրաւ եւ գրեթէ համատարած երեւոյթ է մեր մօտ՝ առողջ քննադատութեան պակասը, դառն ճշմարտութեանց հետեւողական կոծկումը:

Հայ իրականութեան մէջ յայտնուող արատաւոր երեւոյթները, թիւրն ու թերին, սխալներն ու բացթողումները՝ վստահաբար շատեր կը տեսնեն մեր մէջ, սակայն կը խուսափին զանոնք բարձրաձայնելէ՝ «գէշ մարդ չըլլալու» նկատառումով, կամ՝ կը նախընտրեն լուռ համակերպիլ անոնց, ստրկամիտ յարմարողականութեամբ թէ անտարբերութեամբ...: Այս վարքագիծը պատճառ կը դառնայ, անտարակոյս, որ այդ արատաւոր երեւոյթներն ու սխալները բազմանան անարգել եւ արմատաւորուին մեր հաւաքական կեանքին մէջ:

Ճշմարտախօսութիւնը կամ քննադատութիւնը իր «գինը» ունի անշուշտ, եւ քիչ չեն այն պարագաները, երբ զայն բարձրաձայնողը կը դատապարտուի մեկուսացման, նոյնիսկ տեսակ մը նզովքի...: Ուրեմն՝ ի՞նչ: Ապրինք մենք մե՞զ, կամ ուրիշը՞ խաբելով: Ի վերջոյ, համամարդկային քաղաքակրթութեան պատմութեան մէջ, եթէ որեւէ յառաջդիմութիւն արձանագրուած է, ատիկա եղած է գերազանցօրէն իրագործումը առաքելատիպ այն անձանց, որոնք մտաւորական եւ բարոյական քաջութիւնն ու յանձնառութիւնը ունեցած են՝ հարցադրելու, քննարկելու, քննադատելու տիրող կարգն ու սարքը, եւ միտքերու առողջ բախումով՝ նպաստած են ձեւաւորելու անելի ճիշդն ու արդարը....



21-րդ դարուն, յատկապէս, երբ դեմոկրատիայի մասին կը բարբառինք բոլորս, երբ հաշուետուութիւն կը պահանջուի իւրաքանչիւր ղեկավարէ ու պատասխանատու պաշտօնատարէ, երբ աշխարհ տակաւ կը դառնայ առաւել թափանցիկ, երբ նոյնիսկ հզօր տերութեանց ներկայացուցիչներ հրապարակաւ կը բարձրաձայնեն իրենց թոյլ տուած սխալներուն մասին....հայ իրականութեան մէջ, կացութիւնը կը մնայ անփոփոխ, քարացած...: Ինչո՞ւ այս խորշանքը, յամառ խուսափումը քննադատութենէ եւ ինքնաքննադատութենէ: Միևնուէն ե՞րբ մեր սխալները պիտի բարդենք միայն ու միայն անբարենպաստ պայմաններուն, մեր չար բախտին, արտաքին ազդակներուն, կամ այլոց ուսերուն վրայ: Միևնուէն ե՞րբ մեզի պիտի պակսին բարոյական քաջութիւնը եւ մտաւորական պարկեշտութիւնը՝ պատասխանատուութիւնը ստանձնելու մեր գործած սխալներուն...որպէսզի գէթ մենք ալ կարենանք մեր հաւաքական կեանքի բարենորոգութեան ու իրաւ զարգացման յոյսը փայփայել...

Եթէ նկատի ունենանք մեր պատմութեան վերջին հարիւրամեակը միայն, երբ այնքան ճակատագրական իրադարձութիւններ տեղի ունեցան, ուր հայոց պատմութիւնը կերտուեցաւ անհաշիւ կորուստներու գնով՝ մարդկային, տարածքային եւ այլ, արիւնով եւ աւերով..., հարց տալու չե՞նք, թե՛ հայ կեանքին մէջ, պատասխանատու դերակատարներ երբեւէ անհրաժեշտութիւնը զգացին արդեօ՞ք քննադատելու իրենք զիրենք, քննարկելու թէ ո՞ր էր նաեւ իրենց սխալը, մեղքի սեփական բաժինը եւ պատասխանատուութիւն ստանձնելին անոնց համար այնպէս, ինչպէս վայել պիտի ըլլար բազմադարեան պատմութիւն ու մշակոյթ կերտած ժողովուրդի մը: Ասիկա կը վերաբերի ե՛ւ Ատանայի ջարդերուն յաջորդած հայ-երիտթուրք գործակցութեան, Սարդարապատին յաջորդած Պաթումի դաշնագրին, Կարսի անկումին...Ե՛ւ վերանկախացած Հայաստանի տնտեսական, քաղաքական, մշակութային, ժողովրդագրական յետընթացին, աղետալի արտագաղթին տուն տուող պատճառներուն, մեր երկրի բնապահպանական աղետին...Ե՛ւ 27 Հոկտեմբեր-ի եղեռնագործութեան, Մարտի մեկեան դէպքերուն...Ե՛ւ Սփիւռքի կեդրոնախոյս իրավիճակին, յետ-Եղեռնեան մեծագոյն հայ գիշերօթիկ վարժարանի՝ Մելգոնեան Կրթական Հաստատութեան փակումին...: Տակաւին, ասիկա կը վերաբերի նաեւ հայ հաւաքական կեանքին մէջ ի յայտ եկող բազում ճշգրտ անարդարութիւններուն, քմահաճ կարգադրութիւններուն, կամայականութեանց..., արժանաւորին անտեսումին եւ միջակութեանց խնկարկումին, պայմանաւ որ վերջինները գտնուին իշխանութեանց կամ ջոջականութեան «խնամի, ծանօթ, բարեկամ»ի շրջագիծէն ներս...: Եւ շարքը կարելի է երկարել ու երկարել՝ ազգային-հաւաքական մեր կեանքի տխուր զառիթափին վրայ...:

Առողջ, պարկեշտ քննադատութեան եւ ինքնաքննադատութեան բացակայութեան պայմաններուն տակ, ակնյայտ է որ սխալները կը բարդուին ու կը կուտակուին, արատները մանրէներու նման կը բազմապատկուին եւ կը քայքայեն հասարակութեան հաւաքական մարմինը:

Ճշմարիտ վերանորոգման յոյսը կարելի կ'ըլլայ փայփայել, եթէ կան ճշմարտախօս եւ համարձակախօս, մտաւորական, յանձնառու հրապարակագիրներ, որոնք անաչառ



բարձրաձայնէն ցաւոտ խնդիրները, մատնանշէն թիւրն ու թերին, կատարէն ճիշդ ախտանշումներ, Էապէս միտին զգաստացնել հասարակութեան խիղճն ու գիտակցութիւնը եւ հակակշռել իշխանութեանց ու ջոջականութեան գործած ազգավաս կամայականութիւնները, անոնց ցուցաբերած ոչ-ժողովրդանուէր վարքագիծը: Անոնք՝ այդ յանձնառու հրապարակախօսներն են, որ կոչուած են ըլլալու արթուն պահակն ու բաբախող բազկերակը հանրային կարծիքին, առանց որուն անխափան կը գործէ ամենաթողութեան ազգակործան, աղետալի սկզբունքը:

Պիտի կարենա՞նք հայ կեանքը՝ Հայաստանի մէջ թէ Սփիւռքի, դնել նոր հունկի մէջ, պիտի կարենա՞նք ստիպել որ իշխանութիւն եւ ղեկավարութիւն, ուր որ ալ գործեն անոնք, ի Հայաստան եւ ի սփիւռս աշխարհի, պարտաւորուած զգան հաշուետու ըլլալու իրենց որոշումներուն եւ արարքներուն համար՝ մեր ժողովուրդի դատաստանին առջեւ....թէ՞ պիտի շարունակենք ապրիլ գոյացած ճահիճին մէջ, տակաւ սուզուելով անոր մէջ...:

Նոր տարիները կ'ենթադրեն նոր տեսլական, նորոգ մտածելակերպ ու նորոգ գործելակերպ: Այլապէս, ժամանակի հոսքին մէջ, ոչինչ նոր է այս հին աշխարհին մէջ:

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ

Կիպրահայ

ՅԻՇԱՏԱԿԻ ՈԳԵԿՈՉՈՒՄ ՄԵԼԳՈՆԵԱՆ ԱՆՄԱՀ ԲԱՐԵՐԱՐՆԵՐՈՒ



«Անմահ լուսոյ, ճշմարտութեան, բարիին
Տաճարն է այս, սրբանուէր, թանկագին,
Ան մեզ տուաւ՝ նահատակուած մեր ցեղին
Չաւակներէն լաւագոյնը ու բարին»

Կիրակի 14 Յունուար 2018-ին, Ս. Յովհաննու Կարապետի Տօնին առիթով, սրբազան աւանդութեամբ մը, ոգեկոչուեցաւ յիշատակը անմահ բարերարներ՝ աղա Կարապետ եւ աղա Գրիգոր Մելգոնեաններու: Նիկոսիոյ Ս. Աստուածածին Մայր եկեղեցին փութացեր էին Մելգոնեանի մեծ ընտանիքին մաս կազմող անձեր՝ ըլլան անոնք նախկին հոգաբարձու, տնօրէն, ուսուցիչ թէ աշակերտ, կամ պարզ ազգայիններ: Ներկայ էին նաեւ Պետ. Ներկ. Տեր եւ Տիկ. Վարդգէս Մահտեսեան, Թեմական եւ Վարչական Մարմնի անդամներ, կիպրահայ ազգայիններ եւ հիւրեր՝ յարգելու համար յիշատակը ազգանուէր մեծ բարերարներուն:

Էր երբեմն, ոչ վաղ անցեալին, Բարերարներու Տօնին, Ս. Աստուածածին եկեղեցին կը խայտար կենսալիւր ներկայութեամբը հարիւրաւոր մելգոնեանցի աղջկանց եւ տղոց, որոնք կը ներկայացնէին Նոր շառաւիղները մելգոնեանցիներու տակաւ աճող ընտանիքին...: Այժմ թախիժ մը կայ մթնոլորտին մէջ...կապարի պէս ծանր կը ճնշէ անոնց բացակայութիւնը...: Խզուած է թելը մելգոնեանցիները օղակ-օղակ իրարու ագուցող շղթային:

Պատարագէն ու Հոգեհանգիստէն ետք, ներկաները համախմբուեցան Մելգոնեան Կրթական Հաստատութեան սիրտը գտնուող Բարերարներու դամբանին առջեւ: Ամայութիւն եւ լռութիւն էր չորս դին...: Միտքս կը թեւածեր դէպի մէկ-երկու տասնամեակ ետ...: Կը մտաբերէի անցեալի այն հին, երանելի օրերը, երբ ամբողջ Մելգոնեանի շրջապատը կեանք կը բուրեր, մթնոլորտը կը շնչաւորուէր հայերէն ճռուողիւնովը, ուրախ գոռում-գոչումովը, խինդ ու ծիծաղովը մելգոնեանցի աշակերտներու...:

Պաշտամունքի պատշաճ արարողութիւն կատարուեցաւ կիպրահայ թեմի Կաթողիկոսական Փոխանորդ Տեր Խորէն Արք. Տողրամաճեանի գլխաւորութեամբ ի յիշատակ ազգային անմահ բարերարներուն, ներկաները միասնաբար երգեցին «Ի վերին Երուսաղէմ»ը եւ «Հայր Մեր»ը, ապա տարիներու անխախտ աւանդութեամբ՝ Մելգոնեան կրթական հաստատութեան քայլերգը՝ «Անմահ լուսոյ»ն: Այնուհետեւ, ներկաները մէկ առ մէկ ծաղկեպսակներ եւ մեխակներ գետեղեցին բարերարներու դամբանին առջեւ:




Սուրիական «Սաուա» ճաշարանին մէջ, հոգեճաշի սեղաններու շուրջ, բարերարներու յիշատակի ոգեկոչումը շարունակուեցաւ հայաբոյր մթնոլորտի մէջ, հայաշունչ երգերու հնչիւններու տակ:

Յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի:

Երան Գույումճեան

Տեսակէտ

ՕԼԻԳԱՐԽԻԱՆ ԻՐ ԷՆՈՒԹԵԱՄԲ ԵՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՓՈԽՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐՈՎ



Վերջին հրապարակումները կ'ըսեն, թէ Հայաստանի հասարակական կեանքէն ներս ամրացած օլիգարխներուն թիւը այսօր արդէն կը հասնի յիսունի: Յստակ չէ, թէ ինչպիսի՞ չափորոշիչներ օգտագործուած են այս քննարկման համար և թէ որքա՞ն վաւերական է այս թիւը: Այնուամենայնիւ յստակ է մէկ բան: Օլիգարխիան արմատացած երևոյթ է մեր երկրին մէջ իր բոլոր բացասական դրսևորումներով, ներառեալ՝ իրմէ սերած

քաղաքական մշակոյթը, որ այսօր տիրաբար կը տնօրինէ մեր երկրի կենսագործունէութեան գրեթէ բոլոր ոլորտները: Հետեւաբար խիստ կարելոր է, որ հայ քաղաքական միտքը մօտէն զբաղուի այս հարցով և սկսի բացայայտել օլիգարխիայի ներքին մեքենականութիւնը: Եթէ ճիշտ է յիսունի հաշուարկը, ապա պարզ է, որ մօտ յիսուն հոգի, ինչ-ինչ միջոցներով, վերջին քառորդ դարու ընթացքին յաջողած են երկրի ներքին քաղաքատնտեսական տարածքը գրաւել և հաստատել իրենց խմբական տիրապետութիւնը ամենուրեք: Եւ այս մէկը՝ ի հեճու՛կս մեր ժողովուրդի անօտարելի իրաւունքներուն:

Ես յաճախ խօսած եմ մենաշնորհային համակարգի գործած ճակատագրական աւերին մասին: Պէտք չէ մոռնալ, սակայն, որ մենաշնորհային համակարգը տնտեսական ոլորտի երեւոյթ է միայն, որ այս պարագային կը յենի աւելի մեծ և համապարփակ տիրակալութեան մը, որ խարսխուած է երկրի քաղաքական դաշտէն ներս: Երկրի բնական աղբիւրներուն, արդիւնաբերութեան, գիւղատնտեսութեան, փոխադրամիջոցներուն, հաղորդամիջոցներուն, զբօսաշրջութեան, ֆինանսներուն, ուժանիւթի պաշարներուն և տնտեսութեան այլ բանալի ճիւղերուն տիրապետելու գործը կը պահանջէ ամուր կամրջագլուխներ հաստատել քաղաքականութեան բեմէն ներս: Եւ քաղաքական ուժի միջոցով մշտնջենաւորել տնտեսական մենաշնորհը և այս վերջինին ապակիներով աւելի եւս ամրապնդել «սակաւ»ներու քաղաքական ուժը երկրին և ժողովուրդին վրայ: Եւ այդ երկուքին փոխ-սնուցիչ ուժականութիւններով կառուցել անտեսանելի և անհպելի այն «վեհապետութիւնը», որ լայն չափերով և իրական կեանքի տուեալներով օրէնքի հասողութենէն վեր կը գտնուի և որ նոյնիսքն օլիգարխիան է:

Եւ անշուշտ յստակ զուգահեռ մը գոյութիւն ունի երկրի աղքատութեան ծաւալներուն և օլիգարխիայի երեւոյթին միջև: Չուզահեռ մը՝ որ կը գործէ ներհակ յարաբերակցութիւններով: Որքան աւելի կ'ամրանան սակաւապետական կարգերը երկրին մէջ, այդքան աւելի կը խորանայ աղքատութիւնը երկրէն ներս և այդքան աւելի կը ծաւալի աշխատունակ ուժերու գաղթը դէպի դուրս: Քանի որ մենաշնորհային համակարգը, իր ներկայի վարքագծով, աշխատատեղերու ստեղծման բնականոն հոլովոյթէն դուրս կը գտնուի : Եւ անշուշտ նորանոր մարտահրաւերներու առջև կը յայտնուին ազգային պաշտպանութեան գործը և «ազգ-բանակ» վարդապետութեան կիրառման հրամայականը:



Դժբախտաբար այս Է պատկերը այն իրականութեան, որուն դեմ յանդիման կը գտնուինք ազգովին: Այն իրականութեան՝ որ Սփիւռքի և Հայրենիքի փոխ-յարաբերութիւնները հետզհետէ կ'առաջնորդէ դեպի փակուղի և որուն վտանգը պէտք է անպայման կանխել:

Կասկած չկայ, որ մեր երկրի քաղաքացին այսօր ինքզինք կը գտնէ ծանր երկընտրանքներու առջեւ իր խղճի նժարներուն վրայ դնելով ոչ թէ լաւն ու վատը դեմ-դիմաց, այլ վատթարն ու վատթարագոյնը: Մեզմէ ոչ ոք թող յաւակնի դաս տալ երկրի մեր ժողովուրդին, երբ մեր երկրի զաւակները զանգուածաբար դուրս կու գան երկրէն: Մեծ սխալներ կը գործեն նաև ՀՀ Նախագահն ու ՀՀ Վարչապետը (և իրենց գունագեղ կուսակիցները), երբ իշխանական իրենց դիրքերէն -- և չիմնաւորուած ընդհանրացումներով -- կը դատեն աղքատ մարդոց կացութիւնը: Երբ կը խօսուի երկրէն ներս գրեթէ 30% համեմատութեան հասնող աղքատութեան ցուցանիշներու մասին և երբ ծնելիութեան և մահացութեան միաւորները կը գտնուին մեծ անհաւասարութեան մէջ և երբ բնակչութեան ծնելիութեան աճը ապահովող տարիքային շերտերն են, որ մեծամասնութեամբ կ'արտագաղթեն, այս իշխանութիւնը լուրջ պատճառ ունի, առաջին հերթին, ինքնի՛ր գործունէութեան հաշուեկշիռը դնելու սեղանի վրայ և ինքզինք դատելու և մանաւանդ սրտբացօրէն ու սրտցաւութեամբ խօսելու իր ժողովուրդին հետ:

Փաստը այն է, որ հաղորդակցութեան այդ ողջմիտ եզրերէն լայնօրէն զրկուած է մեր երկրի հասարակական համակարգը այսօր: Մեծ և արդար ակնկալութիւններով, մեր ժողովուրդը իր քուէն տուաւ Նոր սահմանադրութեան: Այսօր, սակայն, կը պարզուի, որ սահմանադրութեան աւիշ ներարկող այն անգիր օրէնքը, որ կը կոչուի ընկերային (սոցիալական) պայմանագիր, կը շարունակէ մնալ լրջօրէն թերի: Սահմանադրութիւնը ինքնաբերաբար կը պարպուի իր իմաստէն, երբ իրական կեանքի մէջ վարկաբեկուած է ընկերային պայմանագիրը: Հարց տուէք դուք ձեզի, թէ ինչու՞ սահմանադրութեան կողմ քուէարկող մեր ժողովուրդը կարեւոր զանգուածով մը կը վաճառէ իր քուէն Նոր խորհրդարանի ընտրութեանց մէջ: Կը վաճառէ քանի որ կ'անդրադառնայ, որ հակառակ սահմանադրութեամբ հաստատուած իր իրաւունքներուն՝ ինք իսկական քուէ չունի: Կը վաճառէ, քանի որ ինք արժէք չի տար այն «քուէ»ին, որ ինք ունի: Կը վաճառէ, քանի որ այդ քուէին դրամական «փոխարժէքը» շատ անելին կ'արժէ իր մտքին մէջ քան իր քուէն... տնտեսագիտութեան մէջ յայտնի «անտարբերութեան կորագծերն» են, որ բնական բերումով կ'ը սկսին գործել մարդոց փոխընտրութիւններու յստակացման մէջ ի փոխարէն խորքային հայրենասիրութեան լիազօրող ուժին:

Արժեզրկուած քուէն --- ճիշդ ինչպէս արժեզրկուած դրամանիշը (փողը) – պիտի անպայման փոխարինուի...ան այլեւս քուէ չէ, այլ սոսկ ապրանք և ենթակա՛յ՝ տնտեսական մարդու ամենէն շուկայական բնագոյններուն: Եւ այս այսպէս է, քանի որ հոն, ուր կայ օլիգարխիա, ժողովրդավարութեան գործիքները կը դադրին գործելէ և քաղաքացին կը դադրի քաղաքացիի պէս ապրելէ իր կեանքը: Ի վերջոյ տեղի կ'ունենայ ամենէն ահաւորը, որուն անունը չենք ուզեր տալ: Հայրենիքը՝ ինք կ'արժեզրկուի քաղաքացիի աչքին. ան հետզհետէ կը դադրի ըլլալէ քաղաքացիին ինքնութիւնը սահմանող գերարժէք և գործնականօրէն – այսինքն՝ արտագաղթի արարքո՛վն իսկ -- կը «փոխանակուի» ինչպէս քուէն:

Ասոնք շատ ծանր խօսքեր են, բայց այս ծանր խօսքերը ըսելու ժամն է հիմա: «Հաննիբալը մեր դռներուն առջեւն է» և պատմական այս պահը իր ողջ ճգնաժամով կանգնած է մեր դեմ:



Ժամն է այս հարցերը դնելու մերկապարանոց և որոշելու, թե որո՞նք են մեր առաջնահերթութիւններն ու փոխընտրութիւնները (այլընտրանք) այսօր:

Ես համոզուած եմ, որ Հայաստանը ունի իրական փոխընտրութիւններ, որոնցմէ ամենէն պարզը -- և սակայն՝ ամենէն «ծախսատարը» -- յեղափոխութիւնն է: Յամենայն դէպս երկրի մեր հասարակութիւնը, իր լայն զանգուածով, հեռու է այս ճամբան ընտրած ըլլալէ: Ան ընտրած կը թուի ըլլալ արտագաղթի ճամբան: Հետեւաբար օլիգարխիան յեղափոխութեան դէմ պաշտպանուելու մեծ խնդիր մը չունի այսօր: Ան պիտի պաշտպանուի արտագաղթին դէմ...Եւ սակայն ներկայի տուեալներով օլիգարխիան բացարձակապէս անպաշտպան է այս վտանգին դէմ...Բացարձակապէս ձեռնթափ... Առաւել նաև այն՝ որ այս վտանգը աւելի դիւրաւ կրնայ զինք զգեստել, քան որեւէ այլ վտանգ, որ այսօր գոյութիւն ունի իր ռատարին վրայ:

Երկրորդ փոխընտրութիւնը օլիգարխիայի կամաւոր և արմատական ինքնայեղաշրջումն է: Մենաշնորհային համակարգի կազմաքանդումը՝ արմատական բարեփոխութիւններու նոր ընթացի մը կիրառումով: Պետական ազդու միջամտութեամբ և վերահսկողութեամբ մենաշնորհները պէտք է բերուին մրցակցային դաշտ և վերածուին ընդհանրացած մեջ վերապրող ձեռնարկատիրութիւններու: Եւ պետութեան գործօն խթանումով՝ անոնք պէտք է մղուին վերաներդրումային (re-investment) առողջ քաղաքականութեան մը փոխանակ իրենց շահոյթը արտասահման փախցնելու: Նոր ու որակաւոր աշխատատեղերու ստեղծման հոլովոյթը կախուած է այս արմատական միջոցառումներէն: Արտագաղթի տարերային ընթացքը զսպելու և զայն շրջելու միակ տարողունակ ձեւը նոր ու որակաւոր և արտասահմանեան այլընտրանքներուն հետ մրցունակ աշխատատեղերու ստեղծումն է և նշանակալի ծաւալներով: Հայաստանը լիովին ի վիճակի է վերաներդրումային այս տեղաշարժը մեջտեղ բերելու: Այդ տեղաշարժը արուեստականօրէն խափանուած է այսօր մենաշնորհային համակարգի մեղքով, որ օլիգարխիայի մեղքն է:

Յօդուածի մը սահմանները շատ նեղ են այս թեքնիք հարցերու մասնագիտական քննարկումը ընելու համար: Բաւարարուինք միայն ըսելով, որ օլիգարխիայի ինքնայեղաշրջման գործընթացը չի կրնար մակերեսային ըլլալ: Ան պիտի ըլլայ խորքային և կենսափոխիչ և պիտի պահանջէ քաղաքական հզօր կամք: Ան պիտի ցաւցնէ, որպէսզի կարողանայ բուժել: Ցաւագերծ լուծումներ չկան: Ցարդ ցաւողը ժողովուրդն էր: Եւ ժողովուրդը «լուծեց» իր հարցը բռնելով արտագաղթի ճամբան: Եկած է ժամանակը, որ օլիգարխիան՝ ի՞նք ընդունի ցաւը իր իսկ մարմինն վրայ և կառավարէ այդ ժամանակաւոր ցաւը իմաստութեամբ՝ փրկելու համար ինքզինք և երկրի ապագան:

Հարց պէտք է տայ, թե օլիգարխիան ինչու՞ պիտի ուզէ այս քայլերուն դիմել... Երբ այսօր տերն է ամէն ինչին: Պատասխանը շատ յստակ է: Օլիգարխիան ընդամենը պատրանքի մը տերն է, եթէ կը կարծէ, թէ ինք տերն է ամէն ինչին: Այն ինչը, որ կայ, ընդամենը կրկներեւոյթ մըն է առանց երկրէն ներս գործող և ամուր հիմերու վրայ դրուած ընկերային պայմանագրի մը: Օլիգարխիան կրնայ ամէն «ինչ» ունենալ, բացի ժողովուրդէն...առանց որուն ոչինչ իսկապէս գոյութիւն կրնայ ունենալ:

Հետեւաբար օլիգարխիայի տերերը պէտք է արագօրէն իջնեն իրենց յաւակնոտ նժոյգներէն և հաշուի նստին ժողովուրդին հետ: Եւ արդէն ՀՀ Նախագահը ինքնայեղաշրջման այս մեծ հրամայականի նախապայմանները կարելոր չափով առանձնացուցած է Փետրուար 12, 2016-ի և Մայիս 18, 2017-ի իր ծաւալուն ելոյթներով: Այդ ելոյթները դժբախտաբար մոռացութեան տրուած են վաղուց: Որմէ պէտք է հետեւցնել, որ անոնք ընդամենը տեսական



մարզանքներ էին հանրային կարծիքը բաւարարելու միտող: Թէ ի՞նչ պատահեցաւ անոնց բանաձեւման բովին մէջ և թէ ի՞նչ տեղ կը գրաւեն անոնք օլիգարխիայի հաւաքական մտածողութեան մէջ, այդ մասին թող վաղուան արխիւները խօսին: Այսօրուան հրամայականն է խօսքէն անդին անցնիլ ամենէն վճռական քայլերով:

Չիմա ժամանակն է, որ պետութիւնը հրապարակ իջնէ ինքնիր մշակոյթը յեղափոխող աշխատանքային ծրագրով և վճռական քաղաքականութեամբ: Օլիգարխիան պիտի դադրի օլիգարխիա ըլլալէ և իր տեղը զիջի հանրութեան: Ժամանակն է, որ հանրութեան պետութիւնը սկսի գործել համարձակօրէն և տնօրինել իր ճակատագիրը: Եւ իր ամէն մէկ արարքով բարոյապէս լիազօրէ քաղաքացին: Այլ ելք գոյութիւն չունի:

Կարօ Արմենեան

Դեկտեմբեր 19, 2017

Ուաշինկթըն

Տեսակէտ

ՀԱՅՐԵՆԱՀԱՆՈՒՄԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻ ԱՄԷՆ ՕՐ ԱՊՐՈՒՈՂ ԱՂԷՏՆ Է

Յ. Պալեան



Հայրենիքի սերը գոյութիւն ունի միայն մեծ հոգիներու մէջ, շահի սերը կը ներծծէ գռեհիկ հոգիները:

Փիեր-ժիլ Կլոտ

Ինչո՞ւ երբեմն հանդիսաւորութեամբ, մամուլով, խորհրդածողովներով եւ գիտածողովներով չենք նշեր Հայոց Հայրենահանման Օրը, որպէսզի խօսուի,

գիտակցութիւն արթնայ Ազգի մը մեղմ եւ անցաւ մաշումին մասին:

Հայրենահանման ըմբռնումը բովանդակութիւն կու տայ զգացական հայրենասիրութեան եւ ճամբայ կը հարթէ յանձնառու հայրենասիրութեան առջեւ, յիշեցնելով տիրոջ պարտականութիւնը:

Յեղասպանութեան զոհ միլիոնը սոսկ յիշատակ է, զանազան որակումներով. մարդկութեան դէմ ոճիր, սրբացում: Գումարեցէք բարոյական միսիթարութեան յարածուն ճանաչումները, որոնք անհետեւանք աղմուկ են ցարդ, կը ծառայեն թուղթ սեւցնելու: Անոնք պատմութիւնը վերստին իր հունին մէջ դնող ազդակ չեն, ազգի որպէս այդպիսին վերականգումին վրայ քար չեն աւելցնէր: Գէթ չկրցան այդ ընել ցարդ:

Հարիւր տարիէ ի վեր կ'ապրինք Հայրենահանման Աղէտին մէջ, բայց կարծեք այդ երեւոյթը մեզ չ'անհանգստացներ, ընդհակառակն: Բացորոշ կամ լուռ գոհունակութեամբ ընդունած ենք Հայրենահանումը, քանի որ ճողոպրած ենք օսմանեան հարստահարութիւններէ, ջարդէ, դարձած ենք յառաջադէմ երկիրներու քաղաքացի, կ'ապրինք ապահով պայմաններու մէջ, ձեռք կը բերենք բարձր կենսամակարդակ: Այս գոհունակութիւնը այն աստիճան մեզ գերած է, որ այժմ ունի իր նորագոյն հետեւանքները Կամաւոր Հայրենահանման իր ձեւով, զոր կը կոչենք Արտագաղթ:

Ազգի որակի եւ համրանքի տեսանկիւնէ, Արտագաղթը կը շարունակէ Հայրենահանումը:

Հայրենահանման եւ Արտագաղթի քաղաքական, ընկերային եւ մշակութային հետեւանքները համապատասխան վերաբերումի չենք արժանացներ, քանի որ անհատական եւ հաւաքական մակարդակներու վրայ, անոնց նկատմամբ չունինք ընկերային գիտութիւններու լոյսին տակ մշակուած ազգային գաղափարախօսութենէ ներշնչուած կեցուածք: Աւելի պարզ խօսելով, ցեղասպանութեան զոհերը ազգին համար մեծ կորուստ եղան, քանի որ ազգը կ'ապրի իր համրանքով: Ի՞նչ պիտի ըլլան Հայրենահանման եւ Արտագաղթի հետեւանքները Ազգին համար, ժամանակի գիծին վրայ, երբ կը դադրինք անմիջականի հակկրողութեամբ զանոնք դիտել եւ դատել:



Ասիոյ մէջ, կրօնական տարբերութիւններու եւ մոլեռանդութեան պատճառով, երկրի բնիկներ ապաստան կը գտնեն դրացի երկրի մը մէջ (Ռոհինկաները կ'ապաստանին Պանկլատէշ): Ինչպէս երէկ, նաեւ այսօր, Միջազգային համայնքը իր օրէնքներու անբաւարարութիւնը եւ իր անկարողութիւնը կը շղարժէ բարեսիրութեամբ եւ քաղաքական երթելէկով: Հայրենահանման կանխարգիլման, սրբագրութեան, եւ Հայրենահանուածներու իրաւունքի պաշտպանութեան օրէնքներ չկան: Եւ մեծ խօսարանին մէջ, որ ՄԱԿ կը կոչուի, այս մասին ոչ ոք կը խօսի:

Ոչ մէկ ուժ, ոչ մէկ օրէնք, ինքզինք աշխարհի իրաւարարութեան կոչած ոչ մէկ պետութիւն, Հայրենահանումները որպէս օրակարգ չունին: Թերեւս օր մը, աշխարհի բոլոր պետութիւնները, ՄԱԿը եւ անոնց շարքին Թուրքիան, կրնան ճանչնալ Հայոց ցեղասպանութիւնը, ցաւակցիլ, բայց ոչ ոք ձայն-ծպտուն պիտի հանէ Հայրենահանում աղետի մասին, որուն այսօր գոհունակ զոհերն են Հայրենահանուածները եւ անոնց յետնորդները:

Ցեղասպանութեան ճանաչումներուն մէջ տեղ մը, մեր եւ այլոց կողմէ, չի յիշուիր, թէ ինչո՞ւ ցեղասպանութիւն գործուեցաւ: Կրնա՞նք մէկ տող գտնել եղած եւ բազմապատկուող ճանաչումներուն մէջ, մէկ տող, որ խօսի իրաւ պատճառի մասին, որուն հետեւանքն է նաեւ այսօրուան սփիւռք(ներ)ը: Բայց ինչո՞ւ մեզի բաւարարութիւն տուող այդ ճանաչումներուն հեղինակները պիտի խօսին մեր կողմէ անգիտացուող եւ չպահանջուող հարցերու մասին:

Դիպուկ է 2001-ին Ֆրանսայի կողմէ Հայկական Ցեղասպանութեան ճանաչման պարագան, որ չի յիշեր ոչ ցեղասպանութիւն գործողը, ոչ այն երկիրը ուր ան գործուած է, ոչ ալ պատճառը այդ ցեղասպանութեան: Մենք մեզի հարց կու տա՞նք, թէ ի՞նչ կը պահանջենք, ինչո՞ւ կը պահանջենք, ի՞նչ կը ճանչնան կամ պիտի ճանչնան:

Բայց պատճառի եւ նպատակի անգիտացման համար միթէ՞ցեղասպանութիւնը այս կամ այն ձեւով թերացողները ճանչցողներն են, թէ այդ ճանաչման համար դիմողները, աշխատողները:

Պահ մը երեւակայենք, թէ ի՞նչ պիտի մտածեն եւ ինչպէ՞ս պիտի հակազդեն ցեղասպանութիւնը ճանչցող մեր բարեկամները, եթէ հարցը ներկայացնենք ըսելով, որ ցեղասպանութեան պատճառը հողն էր, եւ հայոց հայրենիքի բռնագրաւման եւ ցեղասպանութեան ճանաչման հարցերը անանջատելի են:

Մեր բարեկամները եւ խօսակիցները առնուազն մեզմէ նուազ միամիտ են: Անոնք կրնան հարց տալ, որ եթէ այդ բռնագրուած հողերը ազատագրուին, այսօրուան սփիւռք(ներ)ը, հայրենահանուածները եւ անոնց յետնորդները կը վերադառնա՞ն: Քայլ մըն ալ առաջ երթալով, կրնան դիտել տալ,թէ ինչո՞ւ պէտք է պահանջել այդ հողերը, երբ այսօր ուրիշներ կ'արտագաղթեն, հողը կը լքեն, կ'աճեցնեն հայրենահանուածներու համրանքը:

Աւելին ալ կրնան ըսել: Հայաստան եւ Արցախ միացեալ տարածութեան վրայ ամբողջ սփիւռքի բնակեցման տեղ կայ:

Այս անգիտացուած իսկական պատճառով կը բացատրուին հայոց ցեղասպանութեան բարոյամիսիթարական ճանաչումները, որոնք ոչ մէկ քաղաքական նկարագիր ունին եւ չեն անհանգստացներ ոչ մեր բարեկամները ոչ ալ մեզ:



Խօսիլ ցեղասպանութեան պատճառի մասին պիտի ստիպէր, որ մենք որպէս անմիջական օրակարգ ունենայինք հայրենատիրութիւն եւ հայրենադարձութիւն զոյգը:

Յետեւաբար կէս-բերան եղած պահանջին կը տրուի կէս-բերան բաւարարութիւն:

Հայրենանուած ժողովուրդի իսկական կացութեան գաղափարախօսական պատասխանը հայրենիքի ամբողջացումն ու բնակեցումն են:

Յեղասպանութեան այսօրուան իրողական քաղաքական բովանդակութիւնը եղած եւ տեւող հայրենահանումն է: Այսինքն հողային պահանջն է, որ իսկական իմաստ կու տայ ցեղասպանութեան ճանաչումներուն, լացէն եւ սուգէն, յուշէն եւ յուշագրութիւններէն անդին, ազգային իրաւունքին եւ գոյութեան կու տայ քաղաքական որակ:

Եւ ի հարկէ, պէտք է խօսիլ սփիւռք(ներ)ի քաղաքական նախաձեռնութիւններու նկատի առնուելիք լրջութեան բովանդակութեան մասին: Ըսինք, քաղաքական նախաձեռնութիւններ, որոնք հայրենակցական միութիւններու ոչ հերիսայով եւ ոչ տուտուկ-զումնայով կը սահմանուին:

Ի՞նչ ընել եւ ինչպէ՞ս, որպէսզի ազգի ակելի քան սփիւռք(ներ)ը կու չերթայ համաշխարհայնացման հեղեղին: Այդ ընելու համար մենք պէտք է դադրինք բաւարարուել բաժակի կէս կամ քառորդ լեցուն մասով, այլ բոլոր միջոցներով մտածել եւ գործել որպէսզի այդ դատարկ մասը կրկին լեցուի, լեցուն մասն ալ ամեն օր քիչ մը ակելի չդատարկուի:

Այս նպատակով, իրապէս պէտք է կազմակերպել հայկական սփիւռք(ներ)ը ոչ որպէս այս կամ այն ձեւի հայկական ծագումով մարդոց ինքնագոհ համայնքներ, որոնք իրենք զիրենք կը տեսնեն յաւերժացող եւ յաւերժական սփիւռքացման մէջ: Սերունդ պէտք է պատրաստել հայրենատիրութեան եւ հայրենադարձութեան ենթահողի վրայ, օրինակ, դպրոցներու, միութիւններու, կուսակցութիւններու, եկեղեցիներու ծրագրային-կրթական առաջադրանքներուն մէջ պէտք է արձանագրել նոյն հայրենատիրութիւն-հայրենադարձութիւնը: Այսինքն, հայրենահանումն ըլլալու գիտակցութիւնը պէտք է թելադրէ այն առաջնորդող միտքը, որ սփիւռք(ներ)ը ժամանակաւոր սպասման կեդրոններ է հայուն համար:

Եթէ այս ժամանակաւորի սուր զգացողութիւնը կորսուի, սփիւռք(ներ)ը ինքզինք կը դատապարտէ դեռ ժամանակ մըն ալ ըլլալու ծագումով հայ, օր մը այդ անգամ մոռնալու: Ընկերութիւններու ձեւաւորման մէջ ժամանակը անգուր է:

Հայրենահանումը ազգի մը հանդէպ գործուած յոռեզոյն ոճիրն է: Ան ազգի անդամները կը դատապարտէ այլասերման, ազգին համար ողջ մեռելներու:

Հայրենահանման ակեր գործած եւ գործող հետեւանքներուն, եւ անոնց վերացման կարելիութիւններու քննութեան համար, չ'արժե՞ր հակա-ամբոխավարական եւ հակա-ինքնախաբեական խորհրդածողով մը գումարել, եւ խօսիլ զանգուածներուն, դուրս գալով բջիջներու օղակէն:

Չանգուածներուն. մէկ առ մէկ: Իւրաքանչիւրին իր յարկին տակ, ոչ միայն յայտարարութիւններով եւ հաղորդագրութիւններով, որոնք կը հասնին գիտցողներուն եւ համոզուածներուն:



Համաժողովը պետք է արտայայտուի լուռ մեծամասնութեան եւ անտեսանելի դարձածներուն մասին, զինուելով հայրենաստիքութեան եւ հայրենադարձութեան առաջադրանքներով:

Տեսակէտ

Մտորումներ՝ Ազատութիւն եւ Ենթակայութիւն

«Պարտուց Հրամայական» եւ «Պատմական Անհրաժեշտութիւն»

Իմաստասիրական Նշմար



Իմաստասիրական Նշմար

"Այսպիսի իրավիճակ կը պարզէն այսօր Հայաստանի եւ Լիբանանի փակ հասարակութիւնները: Հոն տիրող համակարգը՝

օլիկարխներու վայրի դրամատիրական ապագային համակարգն է: Այս հակաժողովրդական բռնատիրական համակարգը կը պահէ ոստիկանական հսկայ բանակ մը ճնշելու համար ըմբոստացող դժգոհ ժողովուրդը:"

Մեր Գասպար Տերտերեան, Պէյրուզ, 23 Օգոստոս 2017

Բաց հասարակութեան մը մթնոլորտը կը յատկանշուի ազատութեամբ, մինչ փակ հասարակութեանը կը յատկանշուի ենթակայութեամբ: Իսկ յառաջդիմութեան նախապայմանը՝ յառաջապահութիւնն է, որ կարելի կ'ըլլայ միայն՝ բաց հասարակութեան ազատական մթնոլորտին մէջ, եւ երբեք՝ փակ հասարակութեան ենթակայութեան մթնոլորտին մէջ:

Որովհետեւ՝ բաց հասարակութեան մէջ կը տիրէ ազատ երկխօսութիւնը, կարծիքներու ազատ փոխանակումը, վարէն վեր եւ վերէն վար քննադատութիւնը, քննադատութիւնն ու ինքնաքննադատութիւնը, առարկելու, բողոքելու եւ ըմբոստանալու ազատութիւնը, եւ ոչ թէ՛ «գործադրէ եւ ապա առարկէ»ի բռնութիւնը, գիտակից յանձնառութիւնը կոյր պաշտամունքին փոխարէն, հաշուետւութիւնը եւ հաշուառութիւնը, հարցադրող միտքը, նոր ճշմարտութեան որոնումը, թափանցիկութիւնը, փոխադարձ զիջողութիւնը եւ հանդուրժողութիւնը, իշխանաւորին մերկութիւնը տեսնելու եւ պոռալու կարողութիւնն ու ազատութիւնը: Բայց այս բոլոր ազատութիւնները՝ հասարակութեան համայնական շահերու պաշտպանութեան ի խնդիր, եւ անոր յառաջդիմութեան նպատակով: Զանի որ մարդ անհատը հասարակական կենդանի մըն է եւ պատասխանատու՝ անոր առջեւ:

Բաց հասարակութեան մէջ՝ ոչինչ կը պարտադրուի անհատին, եթէ ունի հասարակութեան հանդէպ պատասխանատւութեան գիտակցութիւն, այլ ան՝ իր սեփական ազատ ու բանական մտածողութեամբ, ինքնուրոյն եղանակով կը հասնի եզրակացութեան եւ անձնական համոզումի:

Փակ հասարակութիւնը, ուր կը տիրէ բռնութիւնն ու ենթակայութիւնը, յետամնացութեան, տեղքայի, ճահճացումի, ամվացումի, քնածութեան եւ ի վերջոյ մահաքումի



դատապարտուած է, նման ոչխարներու հօտի մը, ուր «հաւաքական»ի անունով հանրութեան, բոլոր անհատներուն կը պարտադրուի փոքրամասնական հարուստ կամ հզօր ընտրանիի մը կամքը, որ չի ներկայացներ մեծամասնութեան անհատներուն կամքը, որուն յանգած պիտի ըլլային անոնք գիտակից յանձնառութեամբ, յետ՝ սրտբաց երկխօսութեան, կարծիքներու ազատ փոխանակութեան եւ առանց ձեռնոցի սպառիչ ու համապարփակ քննարկումի: Փակ հասարակութիւնը նման է այն մոլեռանդ քրիստոնեայ հաւաքականութեան, որուն մէջ անհատը ի սկզբանէ կը դատապարտուի ազատագրկումի եւ առանց հաւատալու կատարելու բոլոր ծիսակատարութիւններն ու գոց սորված աղօթքները, կարենալ քաւելու համար իրեն վերագրուած բայց իր չգործած «սկզբնական մեղքը» իր սաղմի կազմութեան վայրկեանին...: Դրամատիրական հասարակութիւնը եւս՝ իր ամբողջատիրական վարչակարգով, փակ հասարակութիւն մըն է, զոր դիպուկ կերպով նկարագրած է մեծատաղանդ Ֆրանց Զաֆքան՝ իր «Դատաստանը» փիլեսին մէջ, ուր դատապարտեալը տեղեակ չէ թէ՛ ինչո՞ւ դատապարտուած է:

Ամենէն ազատագրական գաղափարաբանութիւնն անգամ՝ երբ վերածուի ծիսակատարութեան ու պաշտամունքի առարկային ու անառարկելի հեղինակութեան, կը դադրի ազատագրական, գիտական ըլլալէ, եւ հասարակութիւնը կը վերածէ փակ հասարակութեան: Բայց հասարակութեան մէջ չի կրնար գոյանալ անառարկելի հեղինակութիւն, իշխանութիւն կամ համակարգ:

Փակ հասարակութեան մէջ՝ իշխանութեանց դէմ ըմբոստացող եւ անոնց դիմակայող անհատները տեղ չունին: Այդպիսիները լռութեան կը դատապարտուին՝ բանտարկութեամբ, աքսորով կամ արտագաղթով եւ կամ ալ՝ տեռորով... Եւ այդպիսիներու կորուստով՝ հասարակութիւնը կը թշուառանայ, կ'ամլանայ, կը դառնայ յետամնաց եւ կը դատապարտուի քնածութեան, եւ ի վերջոյ՝ մահաքունի:

Դրամատիրական՝ ամբողջատիրական վարչակարգ ունեցող փակ հասարակութեան մէջ եւս այդպիսիները կը մեկուսացունին: Անոնք բնաւ չեն կրնար իշխանութեան հասնիլ՝ քաղքենիական դեմոկրատիայի օրէնքներով կայացող ընտրութիւններու ճամբով: Որովհետեւ հոս արտօնուած չեն համակարգային ընդդիմութեան ուժերը: Յոս ընտրութիւնները կ'արտօնեն միայն՝ ներհամակարգային հերթափոխութիւն, ներհամակարգային իշխանափոխութիւն, ընդհանրապէս՝ նոյն համակարգի երկու գլխաւոր կուսակցութիւններուն միջեւ՝ դեմոկրատական եւ հանրապետական, աշխատաւորական եւ պահպանողական կուսակցութիւններուն միջեւ՝ ԱՄՆ-ի եւ Բրիտանիոյ մէջ օրինակի համար: Կամ 8 Մարտի եւ 14 Մարտի ճակատներուն միջեւ՝ Լիբանանի մէջ: Բայց այս կարգի ընտրութիւնները կրնան երեւան հանել համակարգային ընդդիմադիրները, որոնք ընդհանրապէս փոքրամասնութիւն կը կազմեն, եւ տիրող համակարգը կը գիտնայ թէ ասոնք հարկ է մեկուսացնել այլազան աւելի մեղմ միջոցառումներով քան՝ բանտարկութիւնը կամ տեռորը:

Այսպիսի իրավիճակ կը պարզեն այսօր Յայաստանի եւ Լիբանանի փակ հասարակութիւնները: Յոս տիրող համակարգը՝ օլիկարխներու վայրի դրամատիրական ապագային համակարգն է: Այս հակաժողովրդական բռնատիրական համակարգը կը պահէ ոստիկանական հսկայ բանակ մը ճնշելու համար ըմբոստացող դժգոհ ժողովուրդը: Յայաստանի պահած ոստիկաններու թիւը աւելի քան եռապատիկն է միջազգային միջինին: Յարիւր հազար բնակիչի համար անհրաժեշտ ոստիկաններու միջազգային միջինը 300 ոստիկան է... Յայաստանի մէջ՝ 1000 է: Մինչ Ճափոնի մէջ՝ միայն 197 է, Ռուսաստանի մէջ՝



285 Է, ԱՄՆ-ի մէջ՝ 256 Է, Բրիտանիոյ մէջ՝ 307, Պահամաներու մէջ՝ 848 Է...: Ուրեմն, Յայաստանի փակ հասարակութիւնը ունի աշխարհի թիւով մեծագոյն ոստիկանութիւնը (2015 թուին՝ 19,500 ոստիկան): Երբ Պերճ Զեյթունցեան կը պահանջէ «բարեկեցիկ, օրինապահ երկիր», բնաւ ըսել չուզէր «օրինապահութիւն»՝ ոստիկանական բիրտ ուժով...:

Հոս՝ Լիբանանի բազմահամայնքային վարչակարգը կը բաղկանայ իրարմէ անջատ, իրարու միջակից, իրարու ստող եւ ի պահանջել հարկին գիրար սպաննող մեծ ու փոքր18 փակ հասարակութիւններէ: Հոս չկայ լիբանանցիներու լայիք համայնք: Զաղաքացիները զաւակներն են համայնքներուն եւ ոչ թէ Լիբանանի հայրենիքին: Լիբանանցիներու առաջին պատկանելիութիւնը եւ հաւատարմութիւնը կ'երթայ իրենց համայնքներուն, եւ ոչ թէ՝ Նոյնիսկ Լիբանանի բանակին, եթէ իրենց համայնքը դեմ է բանակին... Եւ կողմակից՝ ահաբեկիչ վարձկան հրոսակներուն, որոնք գրաւած են Լիբանանի որոշ շրջանները Սուրիոյ սահմանին երկայնքին... միեւնոյն սիւննի համայնքին պատկանած ըլլալուն համար:

Բաց հասարակութեան մէջ՝ ազատախոհ եւ հայրենասէր անհատներն են, որ կը կազմեն իրենց վարչակարգը: Փակ հասարակութեան մէջ՝ այսպիսի անհատները տիրապետուած են ապագգային ու ժողովրդատեաց բայց հզօր եւ ունեւոր խմբակի մը պարտադրած վարչակարգէն:

Բաց հասարակութեան մէջ՝ քննադատելը, առարկելը, բողոքելը, ընդդիմանալը եւ ըմբոստանալը ոչ թէ միայն իրաւունք մըն է, այլեւ՝ պարտականութիւն մը՝ ի շահ հասարակութեան յառաջդիմութեան ու բարօրութեան: Իսկ փակ հասարակութեան մէջ՝ կը պահանջուի հնազանդութիւն, օրինապահութիւն, հաւատարմութիւն եւ գործադրութիւնը վերէն եկած հրահանգներուն՝ առանց առարկութեան, կամ՝ անտարբերութեամբ ու կրաւորականութեամբ: Այստեղ անհատները կ'ըլլան ստախօսներ, կոյր վկաներ, տգետներ, ապուշներ, կամ՝ ստրկամիտներ:

Բաց հասարակութեան մէջ՝ անկեղծ եւ ազատ երկխօսութիւնը, կարծիքներու ազատ փոխանակումը, իրար-հասկացողութիւնն ու փոխադարձ զիջումները կը յանգին՝ միահամուռ համախոհութեան, ինչ որ հասարակութիւնը կը զօրացնէ արտաքին սպառնալիքի դեմ:

Այսպիսի հասարակութիւնը կրնայ դիմագրաւել ամեն մարտահրաւեր, կրնայ ճկիլ՝ առանց կոտորելու կամ պառակտուելու: Մինչդէռ փակ հասարակութիւնը չունենար այս ներքին համախոհութիւնն ու միահամուռութիւնը, չի կրնար ճկիլ ու կը պառակտուի արտաքին միջամտութեան հետեւանքով, եւ արտաքին ուժը կը ներթափանցէ եւ կը տիրէ բաժնելով հասարակութիւնը: Բայց տիրող խմբակը կը զինակցի օտար ուժին հետ՝ պահպանելու համար իր շահերը եւ մնալու համար իշխանութեան գահին վրայ: Այս հասարակութիւնը չի կրնար յառաջդիմել, այլ միայն կապկել ուրիշ հասարակութիւններու արդիականութեան երեւոյթները միայն, առանց բովանդակութեան...: Այս տեսանկիւններէն եւս՝ Յայաստան ու Լիբանան յար եւ նման փակ հասարակութիւններ են:

Մշտապէս վերատեսութեան եւ վերաքննութեան առարկայ դարձող բաց հասարակութիւնը նաեւ ինքզինք կը վերանորոգէ, քանի որ իր անցեալի պատմութիւնն անգամ կը վերագնահատէ՝ այսօրուայ լոյսին տակ, եւ՝ վերջնական կարծուած հին պատմական ճշմարտութիւնները եւս ժամանակավրէպ կամ ժամանցուած կը գտնէ, եւ յայտնաբերուած ճշմարտութիւնները այժմեական կը գտնէ նոր ժամանակներու լոյսին տակ, որովհետեւ՝



պատմութեան զարգացումը ունի պարուրածել քաղաքակրթական վերելք մը, անցնելով հանդերձ անցեալին նմանող բայց նոր անելի բարձր կետերէ: Այսպիսով՝ բաց հասարակութիւնը ինք կը կերտէ իր ապագան անելի մեծ ինքնավստահութեամբ, քանի որ չի հետեւիր ուրիշ հասարակութիւններու պատմութեան ճշմարտութիւններուն, որովհետեւ՝ պատմական զարգացումը շարունակական շղթայ մըն է փոփոխութիւններով, որոնք անընդմեջ կը յաջորդեն իրարու, որոնց կամայական ընդմիջումը,– որոշ փոփոխութիւններով վրայէն ոստումով –, կրնայ խախտել զարգացման բնական ու ներդաշնակ ընթացքը: Եւ արդէն, իրական կեանքին մէջ չկան անշարժ, անփոփոխ ու նուիրագործուած բոլորին համար օգտակար կամ պարտադիր ճշմարտութիւններ: Ամբողջ տիեզերքը մնայուն շարժումի եւ փոփոխութեան մէջ է, եւ ամէն իրական գոյ՝ գոյ է միայն՝ տարածքի մը եւ ժամանակի մը մէջ: Բացարձակ ոչինչ կայ, յարաբերականն է տիրական, նաեւ՝ փոխակերպումը փոփոխութեան իբր հետեւանք: Բնագիտութիւնը կը հաստատէ որ ոչինչէն ոչինչ կը ստեղծուի, բայց գոյ մը կրնայ փոխակերպուիլ ուրիշ գոյի մը: Նոյնպէս՝ անցեալ չունեցող բան մը՝ ապագայ չի կրնար ունենալ...:

Բաց հասարակութիւնը կը կերտեն ազատախոհ, քննադատական կեցուածք ունեցող, բողոքող, ըմբոստացող եւ գիտակից յանձնառութիւն ունեցող անհատները՝ եթէ միաւորուին, կազմակերպուին եւ աննկուն, անյողողող ու երկար շունչի յեղափոխական պայքար մղեն փակ հասարակութեան բռնատիրութեան տապալումին համար: Պայմանաւ, որ ազատախոհ անհատները ունեցած ըլլան գիտակից յանձնառութիւն հասարակութեան նկատմամբ, պատասխանատուութիւն զգան հասարակութեան հանդէպ, որպէս անասուն կենդանիներէն զատորոշուող ՄԱՐԴ Էակներ: Բանի որ ազատութիւնը եւս բացարձակ չէ, կամայականութիւն չէ, ինքնանպատակ կամ աննպատակ չէ, սանձարձակութիւն չէ՝ ՄԱՐԴ Էակին համար, որ անձնաւորութիւն է, տարբեր՝ անասուն կենդանիներէն..., հօտի մը ոչխարներէն, խոտակերներէն...:

Իդէապաշտ բացարձակապաշտ իմաստասիրութեան հետեւորդ (Emmanuel Kant-ի հետեւորդ) հայ իմաստասէր, բարոյախօս ու մանկավարժ Ռեթեոս Յ. Պերպերեանն անգամ բացարձակ չի նկատեր ազատութիւնը: Ան կը գրէ. «Պարտքն է բարոյական օրէնքը՝ պարտուց հրամայականը: Պարտքին հնազանդիւր կը նշանակէ գործել՝ իբրեւ բանաւոր եւ ազատակամ մարդ Էակ, իբրեւ անձնաւորութիւն, որուն տարերքն են՝ բանականութիւնը եւ ազատութիւնը, որուն պայմանն է՝ հնազանդիլ ազատօրէն բարոյական օրինաց: Մարդը անձ մըն է՝ եթէ գործէ հնազանդելով բանականութեան: Անձը՝ ազատութեամբ հնազանդելով պարտքին, բարոյական գործ մը ըրած կ'ըլլայ, մարդ եղած կ'ըլլայ... este homo!»: Այսինքն՝ մարդ եղէք, ինչ որ կը պահանջէր Պարոյր Սեւակ թախանձելով՝ «Մարդու նկատմամբ՝ մարդ եղէք մարդիկ...»:

Ռեթեոս Յ. Պերպերեանի մարդ ըլլալու՝ մարդեղութեան այս քաղաքակրթիչ կոչը՝ բարոյականութեան պատգամ մըն է, որ գոյութիւն ունի նաեւ՝ մատերիապաշտ յարաբերականապաշտ իմաստասիրութեան մէջ, նաեւ՝ Նագովրեցի Յիսուսի ուսմունքին մէջ, որ կ'արժեւորէ մարդոց ըլլալու կարողութիւնը, քան թէ՝ ունենալու: (Լեւրան Զարոզին մէջ. «Քանզի ինչ կ'արժէ մարդ, երբ աշխարհը ունենայ բայց կորսնցնէ իր անձը...», այսինքն՝ դադրի մարդ ըլլալէ):

Ուրեմն, իդէապաշտութեան իմաստասիրութեան բնագանցական (մեթաֆիզիք) մտածելաբանականին մէջ անգամ՝ ազատութիւնը սանձուած է «պարտուց հրամայական»ով:



Իսկ մատերիապաշտութեան իմաստասիրութեան տրամախոհական (դիալեկտիկ) մտածելաբանական մէջ՝ ազատութիւնը սանձուած է «պատմական անհրաժեշտութեան հնազանդութեամբ»...: Այսինքն, պատմական անհրաժեշտութեան ուղղութենէն դուրս, տարբեր ուղղութիւններով երբ մարդը շարժի, ան շարժած չըլլար ազատօրէն, ազատախոհ մարդ եղած չըլլար:

Որովհետեւ մատերիապաշտութեան իմաստասիրութիւնը ոչ միայն տրամախոհական մտածելաբանակ ունի, այլեւ՝ պատմական տեսլական, եւ ամբողջական անուանումով կը կոչուի՝ պատմական եւ դիալեկտիկական մատերիապաշտութիւն: Պատմական տեսլականին համաձայն, մարդկութեան պատմութիւնը կը զարգանայ պարուրածեւ վերելքով՝ հասարակարգէ հասարակարգ անցում կատարելով, նախնական համայնատիրական հասարակարգէն ստրկատիրական հասարակարգ: Ապա՝ ասկէ աւատապետական, յետոյ՝ դրամատիրական եւ սոցիալիստական, եւ հոսկ՝ զարգացած համայնատիրական հասարակարգեր: (Խիստ հետաքրքրական է հանճարեղ գիտնական Ալպերթ Այնշթայնի հետեւեալ բնութագրումը դրամատիրական հասարակարգին: Ան գրած է. «Սոցիալիզմի իրական նպատակն է՝ մարդկութեան զարգացման երթին մէջ, գլեւ-անցնիլ վայրենացման հանգրուանը»...):

Յետեւաբար, պատմական եւ դիալեկտիկական մատերիապաշտութեան համար, չի բաւեր որ մարդկութիւնը անցում կատարէ կենդանականէն մարդեղութիւն, այլ անհրաժեշտ է որ ազատախոհ մարդկութիւնը անցում կատարէ նաեւ՝ հասարակարգէ հասարակարգ: Այս անցումը պատմական անհրաժեշտութիւն մըն է, որուն ուղղութեամբ շարժիլը ազատախոհութիւն է: Ուրեմն, փակ հասարակութեան մէջ, ազատախոհ յեղափոխական մարդիկն են, որ ըմբոստանալով տիրող հին կարգ ու սարքին դէմ, շարժած կ'ըլլան ազատօրէն, յօգուտ՝ մարդկութեան յառաջդիմութեան, դէպի՝ քաղաքակրթական աւելի բարձր հասարակարգ:

Ուրեմն, ազատութիւնը սանձազերծութիւն չէ՝ թէ իդեապաշտ եւ թէ ալ մատերիապաշտ իմաստասիրութեանց մէջ: Առաջինին մէջ սանձուած է «պարտուց հրամայական»ով, իսկ երկրորդին՝ «պատմական անհրաժեշտութեան հնազանդութեամբ»:

Ազատութիւնը միշտ ալ սանձուած է եւ պայմանաւոր, իսկ բացարձակ ազատութիւնը առասպել մըն է, ինչպէս՝ յաւիտենութիւնը:

Մեթր Գասպար Տերտերեան, Պէյրութ, 23 Օգոստոս 2017

Յօդուածներ

Հայաստանը Սեւրի դաշնագրից հրաժարուել է 1920 թուականի նոյեմբերի 27-ին



Սեւրի դաշնագիրն ու ԱՄՆ նախագահ Վուդրօ Վիլսոնի Իրաւարար վճիռը շատ հայ պատմաբանների ու քաղաքական գործիչների, փորձագետների ու դիւանագետների համար շարունակում է մնալ որպէս կարեւոր յաղթական փաստաթուղթ: Դրանք յաճախ ներկայացւում են որպէս իրաւական լուրջ կռուան, որոնց հիմքով Հայաստանը կարող է տարածքային պահանջներ ներկայացնել Թուրքիայից:

Վիլսոնի Իրաւարար վճիռը մէկ անգամ յիշատակուել է անգամ Սերժ Սարգսեանի հրապարակային ելոյթում, թէեւ նոյն Սարգսեանն ու Հայաստան պետութիւնը 2009 թուականի հոկտեմբերին Ցիւրիխում ստորագրած երկու արձանագրութիւններով, որոնք, ի դէպ, պայմանագրեր են, վերահաստատել են, որ ճանաչում են ժամանակակից Թուրքիայի սահմանները:

Համաշխարհային, մասնաւորապէս հայոց պատմութիւնը նաեւ, ցոյց է տալիս, որ միայն իրաւական փաստաթղթով հնարաւոր չէ հող նուաճել: Այստեղ կարեւոր է մէկ այլ իրականութիւն, որը գիտակցաբար կամ չիմացութիւնից, հայ պատմաբաններն ու քաղաքական գործիչները, փորձագետներն ու դիւանագետները մոռացութեան են տալիս:

1920 թուականի այս օրը՝ նոյեմբերի 27-ին, Հայաստանի Հանրապետութիւնը հրաժարուել է Սեւրի պայմանագրից: Ճիշտ է, դա եղել է ռազմական ագրեսիայի պայմաններում, բայց եղել է:

1920 թուականի վերջերին, երբ թուրք քեմալականներն ու ռուս բոլշեւիկները Բաքուից եկող Հայիեդկոմի անդամների հետ իրականացւում էին Հայաստանը խորհրդայնացնելու ծրագիրը, Հայաստանի Հանրապետութեան վերջին կառավարութիւնը՝ վարչապետ Սիմոն Վրացեան, հրաժարուել է Սեւրից:

Երբ 1920-ի նոյեմբերի վերջերին հրաժարական տուեց Համօ Օհանջանեանի Բիւրօ-կառավարութիւնը, երկրի վարչապետ դարձաւ Սիմոն Վրացեանը: Այս ընթացքում քեմալականները Քեազիմ Կարաբեքիրի հրամանատարութեամբ առաջ էին շարժւում դէպի Հայաստանի խորքը՝ Արարատեան դաշտ: Ընկել էր Կարսը, ապա Սուրմալուն, իսկ յետոյ՝ նաեւ Ալեքսանդրապոլը (Գիւմրին):

Հայկական կողմը ստիպուած է լինում բանակցութիւններ սկսել Կարաբեքիրի հետ, որոնք կայանում են գրաւեալ Ալեքսանդրապոլում:

Ալեքսանդրապոլի բանակցութիւնների հենց սկզբում թուրքերը հայերից պահանջում են հրաժարուել Սեւրի դաշնագրից: Նոյեմբերի 27-ին Ալեքսանդր Խատիսեանը, ով գլխաւորում



Եր հայկական պատուիրակութիւնը, հեռախօսով վարչապետ Սիմոն Վրացեանին տեղեկացում է. «Թուրքերի պահանջով պատուիրակութիւնը միաձայն որոշեց հրաժարուել Սեւրից: Մեր յայտարարութիւնը թուրքական պատուիրակութիւնն ընդունեց մեծ գոհունակութեամբ և առաջարկեց անցնել սահմանների հարցին: Ես յայտարարեցի, որ մեր հիմնական ցանկութիւնն է՝ելք դէպի ծով Բաթումի և Ռիզէի միջեւ, ամբողջ Ռուսական Յայաստանը, Վանի վիլայեթը և Բայազետի սանջակը»:

Կարաբեքիրը նոյեմբերի 30-ին տեղեկացում է, որ Թուրքիայի և Յայաստանի միջեւ սահմանագիծ է լինելու Արաքս գետը:

Աւելի վաղ՝ նոյեմբերի 24-ին, երբ Յայաստանի վարչապետ դարձաւ Սիմոն Վրացեանը, նրա իսկ ստորագրութեամբ հրապարակուում է կառավարութեան հռչակագիրը, որում մասնաւորապէս ասուում էր. «Յայաստանի պետական կառուցուածքը խարսխուելու է ոչ թէ օտարների սին ու վտանգաւոր ներշնչումներից, այլ Յայաստանի իրական կարողութիւնից: Մեր գործողութեան նշանաբանն է լինելու անկեղծ հաշտութիւն Թուրքիայի հետ և համերաշխութիւն ու խաղաղ գոյակցութիւն բոլոր հարեւանների հետ»:

Երկու տարի անց՝ 1922 թուականին, Վրացեանը ՅՅԴ Ամերիկայի շրջանի 29-րդ Պատգամաւորական ժողովին յղած զեկուցագրում պիտի դառնութեամբ խոստովաներ. «Մաքսիմալիզմը, որի առանձնապէս անզիջող ներկայացուցիչներ էին գաղութներից եկած ընկերները, գլխաւոր պատճառը եղաւ Յայաստանի գլխին եկած հետագայ աղէտների: Ընդհանուր ժողովը [նկատի ունի ՅՅԴ 9-րդ Ընդհանուր ժողովը, որը կայացել է Երեւանում 1919թ. սեպտեմբեր-հոկտեմբերին- Թ. Յ.] չափից ավելի գերազնահատեց հայ ժողովրդին և ՅՅԴ-ի ուժերը, անտեղեակ կամ արհամարհող գտնուեց դէպի Յայաստանի շուրջը գտնուող ուժերը և չկարողացաւ բաւականաչափ գնահատել ո՛չ միջազգային կացութիւնը, ո՛չ էլ հայ հասարակական ուժերի փոխարաբերութիւնները... Թէ մեր հարեւանների և թէ, մասնաւորապէս, Թուրքիայի հետ բարեկամական յարաբերութիւններ հաստատելու պահանջի ինդրում ճակատագրական նշանակութիւն ունեցաւ Ընդհանուր ժողովի որոշումը ծովից-ծով Յայաստանի և Ղարաբաղի մասին: Այսօր, կարծես, այլեւս բոլորի կողմից ընդունուած փաստ է, որ ծովից ծով Յայաստանի պահանջը առնուազն տղայամտութիւն էր: Նա ո՛չ միայն հնարաւոր չէր միջազգային քաղաքական պատճառներով, այլեւ հայ ազգի եկթակայական պայմաններով: Անգամ, եթէ կարելի էլ լինէր այդ սահմաններով Յայաստան ստանալ, մենք ի վիճակի չէինք լինի այն կազմակերպել և կառավարել: Այդպիսի պետութեան մէջ հայերը պիտի լինէին փոքրամասնութիւն և կույ գնային մահմեդական մեծամասնութեանը»:

Իրաւամբ, մեր պատմութիւնը յաճախ պիտի լինի մեր ուսուցիչը:

Թաթուլ Յակոբեան



ԱԿՆԹԱՐԹՆԵՐ



Իբր թէ լուսաբանութեան դար է, իրականութեան մէջ՝ խուժանամտութեան դար է, երբ միտքդ կը խուժեն, միտքդ կը պղտորեն ամեն կողէ եկող տեղեկութիւններ, կարծիքներ, աղմուկ-աղաղակներ...եւ միտքը կը կորսնցնէ, շատ յաճախ, ճիշդը տեսնելու, ճիշդը դատելու, յստակ մտածելու անչափ եական յատկանիշները...

.....

Ինչ ալ պատահի, չկորսնցնել ներքին կրակը, խանդավառութիւնը, որոնք անհատն ու ազգը կը տանին դէպի նորանոր խոյանքներ լուսախոյզ...Չյանձնուիլ կեանքի գետնամած եւ դիւրին հաճոյքներու ոլորապտոյտին, չնահանջել արութեան, գեղեցկութեան եւ ճշմարտութեան նորանոր բարձունքներ նուաճելու վսեմագոյն փառասիրութենէն, ինչ որ մարդ էակին եւ ազգին գերագոյն արժանաւորութիւնն է...

.....

Չիմա պիզնէս է ամեն ինչ...առք ու վաճառք է ամեն ինչ...ծախու ապրանք է ամեն ինչ, ամեն ապրանք իր գինն ունի, եւ ապրանք են սիրտը, հոգին, եւ ապրանք են մանուկ, պարման, պատմութիւն ու մշակոյթ, պաշտօն ու դիրք, փառք ու պատիւ...եւ ապրանք են ազգ, հայրենիք, օճախը սուրբ պապենական...Այս հրէշային մտայնութեան դէմ պիտի պայքարինք ամեն մէկս եւ հաւաքաբար...

.....

Ճիշդը խօսելու կամ գրելու համար, պատրաստ պիտի ըլլաս քարկոծուելու...Ճիշդը խօսելու համար, անաչառ պիտի ըլլաս...

Ճիշդը խօսելու համար, ոգիի յանդգնութիւն պիտի ունենաս...

Ճիշդը խօսելու համար, բարոյական քաջութիւն պիտի ունենաս...

Ճիշդը խօսելու համար, սեփական շահն ու օգուտը արհամարհել պիտի գիտնաս...

Ճիշդը խօսելու համար, ճշմարիտին առաքեալը պիտի ըլլաս...

.....

Մարդը շատ անելին է քան քաղաքացին, քան բնակիչը, որ քանակով միայն կը բնութագրուի գերազանցօրէն...մինչդեռ մարդը էապէս որակ է, մարմնականէն եւ բնագոյնինէն անդին՝ հոգեւոր տարածք, որ ունի բարոյական, բնական, գեղագիտական հասկացութիւններ ու արժէքներ...Ներկայիս ժողովրդավարութեան եւ անոր հետ շողկապուած եզրերով՝ մարդը կը դառնայ սոսկ թիւ ու քանակ, վիճակագրականօրէն հաշուուելի, եւ մոռացութեան կը տրուի անոր հոգեւոր տարածքը...ոգին, արժէքը, էութիւնը...



.....

Մարդիկ յոգնած են աշխարհի ներկայ դրուածքէն, ներկայ կարգ ու սարքէն...յոգնած են «համաշխարհայնացում» կոչուած, Էսպէս նիւթապաշտ եւ հոգեզուրկ հրէշէն, որ տակն ու վրայ ըրաւ երկիրներն ու ժողովուրդները, խառնիճադանճի վերածեց ազգային դէմքը, դիմագիծը, մշակոյթը, պատմութիւնը...քառս տարածեց ամէնուր...եւ այդ քառսին մէջ, մեծ ուժերը կը յօշոտեն փոքրերը՝ անխնայ բրտութեամբ...Ահա այս «Եւթապլիշմենթ»ին, այս տմարդի համակարգին դէմ կ'ելլեն ժողովուրդներ, երկիրներ..Աշխարհին նոր գիտակցութիւն, նոր մաքրութիւն, ոգիի զարթօնք են պետք....

.....

Մարդուն ներաշխարհը իր լաւագոյն ընկերն է...Ներաշխարհ՝ լի խոհերով ու մտորումներով, յուշերով ու յոյզերով, երեւակայութեամբ ու բանականութեամբ...զգացումներով եւ ապրումներով...Ինչպէ՛ս կրնայ ձանձրոյթը պատել հոգիդ, երբ ունիս ներաշխարհ, որ մարդ Էակին մեծագոյն հարստութիւնն է...

.....

Մեր քաղաքակիրթ դարը որքա՛ն է կորսնցուցած գեղեցկութեան խորհուրդի զգայնութիւնը ...իսկ գեղեցկութիւնը կ'արտայայտուի ամէն բանի մէջ՝ ճարտարապետութեան, վարք ու բարքի, լեզուի, երգ ու պարի, խօսք ու բառի...եւ անշուշտ արուեստի մէջ...: Ճապաղութիւնը, անշնորհքութիւնը, լեզուի աղճատումը...խորհրդագուրկ արուեստը դարձեր են մեր ժամանակները յատկանշող տարրերը...: Գեղեցկութեան նման այլանդակումը ուղղակիօրէն կ'անդրադառնայ մարդ Էակի բարոյական հասկացութեան վրայ եւ՝ փոխադարձաբար...Գեղեցկութեան խորհուրդը վերագտնելը կրնայ ըլլալ մեր ժամանակներու գերագոյն մարտահրաւերներէն մին....

.....

Մոլորութիւնը օրուան հիւանդութիւնն է...կը մոլորուիք երբ կը հաւատանք «մարդկային իրաւունք», «ժողովրդավարութիւն», «ազատութիւն» եւ նման անբովանդակ եւ խաբէպատիր եզրոյթներուն, որոնք ուղեղները խցանելու կամ լուալու միայն կը ծառայեն...Կը մոլորուիք երբ կը հաւատանք սպառողական հասարակութեան օրն ի բուն քարոզած շուկայական «արժէք»ներուն ու կենցաղին, վարք ու բարքին...Կը մոլորուիք երբ համաշխարհայնացման համահարթեցնող ալիքին կ'ըլլանք անձնատուր, մոռնալով ազգային ինքնութիւն եւ ոգի, ազգային արժէք ու մարդկային դարաւոր ավանդութիւններ...Շահան Շահնուր պիտի ըսեր իրաւացիօրէն. «Մեղա՛յ, մեղա՛յ Արարատին...»

.....

Որքան ալ արտաքինը մարդ պճնէ, ինամէ, զարդարէ, զայն հմայիչ ընծայէ, ոգին է որ պիտի նորոգել ու վերանորոգել շարունակ...Առանց ոգիի շարունակական վերազարթօնքին, մարդը կը յոգնի, կը ծերանայ, կը սպառի...Ոգին նոր շունչ ու կենդանութիւն կու տայ մարդուն, ո՛ր տարիքի մէջ ալ ըլլայ ան...Ոգիով երիտասարդ մարդը չի ծերանար երբեք....

.....



Դարի խելացնոր աղմուկը հոգիներու պատանք է...Հոգին Եական կարիքն ունի լռութեան, խաղաղութեան, անդորրի, որպէսզի կարենայ լսել իր սեփական, հարազատ ձայնը, որ խորագոյն Ես-ի ձայնն է, խղճի ներքին ձայնը, որ կը կծկուի, կ'աղճատուի, կ'այլասերի աղմկարար խաժամուժին ու ժխորին մէջ, քսանմէկերորդ դարի իբր գերքաղաքակիրթ, բայց խորքին մէջ մարդ Եակի վայրենացման, մեքենայացման, հոգիներու բրտացման ժամանակներուն....

.....

Եթէ ժողովուրդ մը, ազգ մը չի ձգտիր բարձրագոյն նպատակներու, չունի իր գոյութիւնը իմաստաւորող առաքելութիւն....այլ միայն կը գոհանայ գոյատեւելու ծերակուտական փափաքով, յայնժամ չի կրնար ան զարգացման թռիչք ունենալ, կեանքի նոր որակ ձեռքբերել....Կեանքը՝ անհատին թէ ժողովուրդին համար, ինքնանպատակ չի կրնար ըլլալ, միայն՝ ապրիլ ապրելու համար...Կեանքը, ըստ Էութեան, բարձրագոյն արժէքներ ստեղծելու համար է, գեղեցկութեան, վեհութեան, ազնուութեան, սիրոյ, բարութեան....այլապէս ան պիտի դառնար սոսկ՝ ուտել-խմելու, զուարճանալու, հաճելի ժամանակ անցնելու....Եւ սպառողական քաղաքակրթութեան մէկ յետին պտուտակը ըլլալու գոյութիւն եւ գոյատեւում....

.....

Մեծերը չեն մեռնիր, անոնք կ'ապրին նաեւ եւ ի մասնաւորի իրենց յետ-մահու կեանքով, քանզի իրենց կերպարը, վաստակն ու գործը կը դառնան ներշնչարան, ոգեշնչման աղբիւր իրերայաջորդ սերունդներուն....Հոգեմտաւոր ժառանգ, ոգիի դարբնոց որպէս, անոնք կ'ապրին յար յակտեան, մինչեւ այն ատեն որ կա՛յ, կ'ապրի զիրենք ծնող ժողովուրդը...: Պահ մը կրնա՛նք երեւակայել, թէ ի՞նչ պիտի ըլլար հայ կեանքը, եթէ չըլլային մեր մեծերը, որոնց վսեմ օրինակին կը դիմենք յաճախ, մասնաւոր մեր դժուարին պահերուն....Մեծերը մեր ուղեցոյց փարոսն են, որոնց լոյսը անշէջ է...

.....

Ներկայ աշխարհակարգի նպատակներէն մէկը կը թուի ըլլալ՝ այնպիսի քառսային իրավիճակներ ստեղծել աշխարհով մէկ, որ մարդուն գիտակցութիւնը մշուշապատուի, ան չկարենայ հասկնալ ո՞վ է թշնամին, ո՞վ է բարեկամը....ո՞րն է սխալը, ո՞րն է ճիշդը....ո՞րն է կեղծը, ո՞րն է անկեղծը....Եւ այդ քառսին մէջ, աշխարհի կառավարման կէտերը կարենան իրենց սեփական շահերը ապահովել...

.....

Յոյսը կեանք է, յոյսը լոյս է, յոյսը սպասում է, յոյսը երազ է...Ամէն օր, նոր յոյսով կ'ապրինք, կ'երագենք չգրուած նոր տողը, նոր խոհը, նոր ապրումը, բարի պատահարը, նոր խանդավառութիւնը, անելի գեղեցիկ կեանք մը, ներքին նոր հարստացում մը, նոր հանդիպում մը, եւ այսպէս շարունակ....Յոյսն ու երազը թեւեր կու տան մեզի, ճախրանքի թեւեր, նոյնիսկ երբ մեր շրջապատը գորշ է....Ոգիի թեւերը ոգիի ներշնչում են, ոգիի ազատութիւն...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



ՔԱՌԵԱԿՆԵՐ

ՔԱՌԵԱԿՆԵՐ ԿԱՄ ՔԱՌԱՏՈՂԵՐ



Կարենալու համար ապրիլ
Դժուար, դաժան աշխարհիս մէջ
Խենթութեան գէթ փոքր կաթիլ
Պիտի խառնես օրերուդ մէջ...

.....

Կեանքի պահերն կու գան, կ'անցնին
Անկրկնելի խորհուրդ մ'ունին
Անցնելէն ետք միայն կը զգանք
Որ կեանք մըն էր թողուցինք բաց..

.....

Մարդիկ որոնք գաղտագողի
Քեզ կը կարդան անարձագանգ
Կը նմանին ապերախտին
Որ հացդ կ'ուտէ եւ կ'ուրանայ....

.....

Անցնելէն ետք ես հասկցայ
Արժէքն անգին տարիներուս
Խենթ ու խելառ տարիներուս
Որոնց հետքը միայն մնաց...

.....

Տարիները ակօս բանան
Ճակատիդ ու դէմքիդ վրայ
Իմաստութեան հունտին համար



Որ ընծիւղի, ծաղիկներ տայ...

.....

Գեղեցկութեան լոյսը որ կայ

Յոգւոյդ մէջ միշտ անշէջ մնայ

Թէ որ ինամես ու գուրգուրաս

Որ դաժան հողմն չմարէ զայն....

.....

Տարիները սահին արագ

Արագասոյր ասուպ ըլլան

Անցումէն ետք անոնց, սակայն,

Լոյսն անոնց դեռ կը ցոլայ....

.....

Պատրանքն է մեզմէ անբաժան

Ողջմտութեան հետ քով-քովի

Առաջինը թելեր կու տայ

Երկրորդը մեզ պահէ գետնին...

.....

Թէ որ չըլլայ երազանքն

Կեանքը դառնայ մի կաղապար

Սահմանափակ մի փակ տարածք

Որ բանտարկէ հոգին անափ....

.....

Թէ որ չըլլար անհուն երկինքն

Մեր գլուխներուն վերեւ փռուած

Ինչպէ՞ս թռիչք պիտ' առնէինք

Դէպ' անհունը լայնատարած...

.....

Թէկուզ ըլլայ մէկ ակնթարթ



Լոյսի, սիրոյ, գեղեցկութեան

Անով արբշիռ դուն կը մնաս

Չամակ կեանք մը տեւելու չափ...

.....

Մատչելի հմայքն չի կախարդեր

Սովորական ան կը դառնայ

Անմատչելին՝ երազ անհաս

Քեզ հրապուրէ, կու տայ թելեր...

.....

Թէ սերն ըլլայ առօրեական

Կը մանրանայ, ինչ ալ ըլլայ

Ինչպէս կեանքը առ հասարակ

Մանրութիւններով բազմակուտակ...

ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Գրական-Մշակութային

ՓՈՒՆՋ ՄԸ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ՝ ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆԷՆ



ԱՂՕԹՔ ԱՌԱԲՕՏԵԱՆ

Տէ՛ր, լոյսիդ հետ առաւօտեան

Թող շող առ շող պայծառանամ

Վերադառնամ այն նախնական

Պատկերին սուրբ, նախաստեղծեան...

Տէ՛ր, լոյսիդ հետ այգաբացի

Սանդուխ-սանդուխ վեր բարձրանամ

Գրկեմ տիեզերքն անեզրական

Ու տարածուիմ անպարագիծ...

Տէ՛ր, լոյսիդ հետ երկնապարգել

Քաղեմ գանձեր իմաստուրթեան

Աներեւոյթն ես տեսանեմ

Բացուին աչքերս մշուշապատ...

Տէ՛ր, լոյսիդ հետ սիրածորան

Կաթ-կաթ ցաթէ սեր, բարուրթին

Քանզի գիտեմ իմաստուրթիւնն

Առանց սիրոյ ի չիք դառնայ...Ե.Գ.

.....

ԱՄԷՆ ՏԱՐԻ ՈՐ ԱՆՑԱԻ

Ամէն տարի որ անցաւ, գնաց



Ինձմէ բան մը տարաւ անդարձ
Յեղ մ'ափսոսանք անցած տարուան
Շող մը ժպիտ, խանդ ու եռանդ
Յեւք մը սրտի կարօտավառ
Կաթիլ մ'արցունք սփոփարար
Արշալոյսներ արեւավառ....

Ամէն տարի որ անցաւ, գնաց
Սիրելիներ խլեց անդարձ
Յիշատակներ թողուց ետին
Որոնք մեղմիւ, լուռ կ'առկայծին
Բագինին վրայ սերտ մեհեանիս
Այս օրերուն կարօտագին
Կը բուրվառեն յուշեր անգին...

Ամէն տարի որ անցաւ, գնաց
Ակօս թողուց իմ ճակատին
Սպիտակ թել մը վարսիս հուրհրան
Յետքեր անջինջ խինդ ու ցաւի
Գգուանքը բիրտ ժամանակի
Այլեւ երագ, տենդ ու տենչեր
Լոյս խոկումներ իմաստնաբեր...

Ինչ որ մնաց տուածս էր
Սէր ու գորով, լոյսի շողեր
Աստղալոյսեր ներշնչաբեր
Լուսաժպիտ ակնթարթներ
Արտասուքի կաթիլ լուսէ



Սիրալոյսի վառ ճաճանչներ

Որք պիտ' մնան, ապրին ինձ հետ...Ե.Գ.

.....

ԲԱՌՍ ՄԱՍ...

Բառս մնաց լուսածարաւ

Բառս մնաց սիրածարաւ

Կաթ-կաթ սիրտս ցաթեց վրան

Չյագեցաւ բառս անյագ...

Արեւէն լոյս պաղատեցի

Աստղերէն ցոլք ես ինդրեցի

Սիրալոյսով շաղախեցի

Բառս մնաց միշտ ալ թերի...

Երկնէն ցօղեր կաթեցան մեղմ

Ծաղիկներէն՝ բոյր ու թոյրեր

Ծիածանէն բիւր երանգներ

Դեռ ան մնաց կարօտահեւ...

Բառս մնաց հեզ ու խոնարհ

Դայլայլին քով թռչուններուն

Մեղեդիին տերեւներուն

Կարկաչին քով գետակին վառ....

Բառս, սակայն, դեռ կը սպասէ

Պահին այն հրաշք, ճառագայթուն

Երբ գայ մուսաս եւ գայն օժէ

Աստուածային միւռնով սուրբ...Ե.Գ.



.....

ԲԱՐԻ ԱՐԵՒ

Բիւր բիւր դարեր դուն կը շողաս
Բարի՛ արեւ ու չես հատնիր
Ընդերքիդ հուրն կը վառի յար
Լոյս կը դառնայ, աղբիւր կեանքի...
Յուրքեդ վսեմ հիւլէ մը կայ
Սրտերնուս մէջ որ կ'առկայծի
Կամ ո՞վ գիտէ հուրդ սրբազան
Մեր սիրտերէն կը ճաճանչէ
Բոյլ-բոյլ շատնայ, հրավառի
Արեւալոյս դառնայ շքեղ...Ե.Գ.

.....

ԴԵՌ...

Դեռ սրտիս մէջ բիւր յոյզեր կան
Որք անթեղուած լուռ կը միսան
Դեռ սրտիս մէջ բիւր յոյսեր կան
Որք բողբոջին ամէն գարնան...

Մտքիս մէջ դեռ ծնին խոհեր
Որք զիս յուզեն քուն թէ արթուն
Փայլատակեն գաղափարներ
Չիս հրավառեն մշտառկայծուն...

Ոգիս կ'ուզէ դեռ արարել
Բոյրեր, թոյրեր, երգ ու տաղեր
Չունի երբեք դուկ ու դադար
Բոցավառի զերթ կրակ անմար...



Աշնանացած ծառին նման

Ես դեռ ունիմ միրգեր նաշխուն

Չորս պիտ' բաշխեմ նօթի մարդուն

Աւիշ կենաց ու սիրահաց...Ե.Գ.

.....

ԵՂԷԳՆԵԱՅ ԳՐԻՉՈՎ...

Եղեգնեայ գրիչով մը ծիրանավառ

Ուզեցի երգել երգեր սիրավառ

Սրտիս խորերէն էին միշտ բխած

Չերթ գետերը յորդ ընդերքէն լեռան...

Երգերս դպան շատերու սրտին

Չերթ լոյսի ճաճանչ ամպամած երկնին

Դարձան շող մը յոյս, սիրոյ շունչ մը ջերմ

Գորշ օրերու վագր ու հեւքին մէջ...

Եթէ չհասաւ ճաճանչն անոնց

Ոմանց քար սրտին, ո՞վ է մեղաւոր

Սիրտը բալասան դառնայ այն սրտին

Որ սեր ու հաւատք ունի սրտագին...Ե.Գ.

.....

ԺԱՄԱՆԱԿԱՍ ՍՈՒՐԱՅ...

Ժամանակս սուրաց, անցաւ

Չերթ ասուկ մը արագընթաց

Մացին լոկ էջեր փռցուած

Օրագիրես՝ կեանքի մատեան...



Ամեն մէկ էջ՝ կեանք մը համակ
Ուր դեռ տրոփէ զարկը սրտիս
Թրթիռներով վառ յոյսերու
Կարօտներով հրաշուշան....

Ամեն մէկ էջ՝ լոյսի ցոլանք
Լոյսի դիւթանք, լոյսի բերկրանք
Ապրելու խիւղ արեւաշող
Յրաշք-խորհուրդովն հոգեթով...

Ամեն մէկ էջ՝ դեռ չըսուած խօսք
Յաւ լռելեայն տողերուս մէջ
Տուայտանքով դեռ բաբախող
Յոյզեր, խռովքներ կարօտակեզ...

Ամեն էջիս՝ հոգի մ'անափ
Անհունին մէջ ճախրող հոգի
Որ ոգիով մը կենսավառ
Միշտ որոնեց լուսէ տեսիլք..

Անով միայն թելեր առաւ
Դէպ' հեռուներն արեւածին
Կեանքն իր դարձուց մի պատարագ
Լուսընծայում մը սրտագին....

Կեանք մը համակ կարծես ըլլար
Թիթեռի կեանք մը միօրեայ
Լոյսն ըմպելու կեանք ցնծագին



Ձայն բաշխելու տենդով արբշիր...

Կեանք պարփակող օրագիրն այս

Յետոյ գուցէ նետուի աղբարկղ

Ուրիշին ի՞նչ հոգն է թէ

Էջերուն իր՝ կեանք մը հեծէ: Ե.Գ.

.....

ԹՈՂ ԱՇԽԱՐՀԸ..

Թող աշխարհը յար յղփանայ՝

Վայելքներու մէջ արբենայ՝

Ինծի մնայ՝ մուսաս անգին

Որ թել ու թռիչք տայ հոգիիս...

Շատ եմ տեսեր ոսկի, արծաթ

Սեղաններ շուայտ եւ լիառատ

Յոգւոյն գանձին եմ ես փարեր

Անով եմ ես միշտ լիացեր...

Ճախրեր եմ յար երկնին մէջ ծով

Յամբոյր տուեր աստղերուն թով

Աչքերուս մէջ արշալոյսներ

Չուարթագին, վարդահեղեղ...

Երկունքովս միշտ սիրատանջ

Բերկըրանքով մը լուսառատ

Երկներ եմ ես խոնարհ տողեր

Յամակ հոգիս այնտեղ դրեր...

Տէ՛ր, մի գրկեր բարի ծառադ

Արարումէն այս խանդակաթ

Առանց անոր մահ է դժխեմ

Անով եմ ես արարչահեւ..



.....

ԸՂՁԱՆՔՍ...

Ըլլամ, ապրի՛մ արեւայորդ

Ըմպե՛մ լոյսը արեգական

Կենսարբե՛նամ ու լիանամ

Փարի՛մ կեանքին միշտ սիրայորդ....

Չմտածե՛մ մահը դաժան

Յաւերը բիւր տառապահար

Գգուե՛մ ծառերն, ժայռերն անգամ

Ծաղիկները հազարերանգ...

Կեանքին միայն սիրահարի՛մ

Ծծե՛մ նեկտարն անոր անյագ

Ըմբռնի՛սնե՛մ զայն, դեռ տոչորի՛մ

Կենսածարաւ ու կենսաբաղձ...

Այլեւ լոյս տա՛մ սիրտես, միտքես

Յոգիես հեւք եւ շունչես՝ շունչ

Որ կեանքի ջահն երագահեւ

Շողայ պայծառ ամենեցուն...Ե.Գ.


ԵՐԱՆ ԳՈՒՅՈՒՄՃԵԱՆ



Գրական-Մշակութային

ԱՄԱՆՈՐԵԱՆ ԽՈՀԱԳՐՈՒԹԻՒՆ

Գրեց՝ ԱՐԱՄ ՄԵՓԵԹՃԵԱՆ



Ամանորի խորհուրդը մարդկային կեանքին իմաստաւորումն է: Ապրուած լիարժէք կեանք մը կը վերանորոգուի, միտք եւ հոգեկան ապրումներ կ'անցնին իւրաքանչիւր Մարդ-Անհատին «անցեալ» դարձած իրագործումներու մատեանի էջերուն, ու մեր աչքերը կը յառնենք Նոր տարուան խոստումներուն:

Ինքնագնահատման պահը կ'ապրինք այժմ:

Հաշուեյարդար մը՝ ներանձնական թէ հասարակական գոյգ պարտաւորութիւններով:

Նախ՝ իբրեւ Մարդ-Անհատ:

Ապա, Հայ-Մարդը՝ իր ներկայ Հայրենիքով եւ Սփիւռքով: Ժողովուրդ մը, իր երեք միլիոն հայաստանաբնակ եւ եօթը միլիոն արտերկրի Հայրկէսամբ:

Ժամանակը՝ 21-րդ դարն է յամի Տեառն, բայց անյիշատակ դարերու անցեալ մը ունեցող բազմացեղ ու բազմազգ ժողովուրդներու պատմութեան մէջ, Հայն ալ ունի վաւերական աղբիւրներով հաստատուած եւ ամրագրուած իր Պատմագիրքը: Արդարեւ, աշխարհի մէջ բնութեան յարափոփոխ երեւոյթները խորաչափող ու արձանագրող մարդկային ուղեղը, Չափի, Կշիռի ու Սահմանի երրեակ բանաձեւումներով, ժամանակի ու միջոցի Անսկիզբ ու Անվախճան Անհունութեան տուած է իմաստ ու բովանդակութիւն, ու զայն հիմնած՝ ամենօրեայ յոյսի ու խաւարի իրերայաջորդ երկարաժամեայ պահերու վրայ: Ասկէ ծնունդ առած են այժմ շատ սովորական թուող «օր-շաբաթ-ամիս-տարի» հերթական ու շարունակական ժամանակահատուածները:

Պէտք է արդար ըլլանք եւ միանշանակ կարենանք գնահատել Մարդկային մտքին արգասիքը եղող կրօնա-բարոյագիտական եւ խոհա-իմաստասիրական այն բազմաթիւ վարդապետութիւնները, որոնք հոգեկան եւ իմացական իրենց ճառագայթումներով լուսաւորեցին հին դարերու մարդկային հաւաքական գիտակցութիւնը, իմաստաւորեցին զայն զգալու, խորհելու, մտածելու եւ արտայայտելու կարողականութեամբ:

Ներկայ մարդկութիւնը այսօր հպարտ է նորահնար բազմաթիւ նուաճումներով՝ գիտութեան եւ արուեստի բոլոր ճիւղերու մէջ, որոնց արմատները կը հասնին մեզի մատչելի կամ ալ հին աշխարհի մէջ գոյութիւն ունեցած «քաղաքակրթութիւն»-ները:

Հայրկէսները մէկ փոքրիկ մասնիկն է համաշխարհային այս իրականութեան:



Մարդկային փոխյարաբերութիւններուն հիմքը «համամարդկային փոխադարձ սերն ու յարգանքն է», որ ծնունդ կ'անէ Մարդ արարածին այն գիտակից տրամաբանութենէն, որուն արմատները կը գտնենք սուրբգրային այս Լոյսին ու ճշմարտութեան մէջ, որ կ'ուսուցանէ մեզի, թէ «Ի սկզբանէ Էր ԲԱՆը» եւ ԲԱՆը Աստուածն է: Բան եւ Բանականութիւն, Տրամաբանութիւն եւ Հաւասարակշիռ դատողութիւն, Ողջախոհութիւն եւ Մարդկայնութիւն կու գան ամբողջացնելու Մարդ արարածին շնորհելու «Մարդ-Էակ» բնորոշումը, որուն ներսիդին կը բնակի (պէտք է բնակի) եւ ամէն ամանորին՝ Նոր Մարդը, ու մեր պարագային՝ Նոր Հայ Մարդը:

Արդ, իբրեւ ամբողջական Հայ Մարդ, ի Հայաստան, յԱրցախ եւ ի Սփիւռս աշխարհի, մենք «ՀԱՒԱՏԱՄՔ» անուն սար մը ունինք մեր ներաշխարհին մէջ: Կը հաւատանք մեր լինելութեան, որ խարիսխն է Հայ ժողովուրդի գոյերթին:

Մեր ժամանակակից պատմութեան վերջին 150 տարիները հանդիսացան ճակատագրական երկար ժամանակաշրջան մը: Ժամանակի անկը միայն յառաջընթաց կ'արձանագրէ: Ետդարձը բացառուած է: Պիտի քայլ պահենք Նոր ժամանակներու հրամայական պահանջներուն զուգահեռ:

Եկեք ընդգծենք ու գլխագրենք ՈՂՋԱԽՈՐՈՒԹԻՒՆ բառը, յատկապէս՝ անոր բարոյախօսական թէ քաղաքական ու դիւանագիտական իմաստաւորումներով:

Ամէն տարի, ամանորեան տօնական օրերուն, յուսադրիչ բարեմաղթանքներ կ'արտասանուին «բաժակաճառային» բովանդակութեամբ ու բառապաշարով: Այս Նոր տարին, քանի որ կը զուգահիսի Սարդարապատի համաժողովրդային եզակի եւ ինքնուրոյն յաղթական ճակատամարտի 100-ամեակին, զոր կը պարտինք յատենի Գեորգ Ե. Ամենայն Հայոց կաթողիկոսի եւ օրուան «Ղեւոնդ Երեց» Գարեգին Յովսէփեան եպիսկոպոսի հերոսական կեցուածքին, երբ Թիֆլիսի Ազգային խորհուրդէն կը հրահանգուէր Ս. Էջմիածնի բանալիներու յանձնումը օրուան քաղաքական-ռազմական առաջնորդներուն ու այս հակադարձութեամբ՝ համահունչ դօզանջեցին ամբողջ Հայաստանի եկեղեցիներու զանգերը, ազդարարելով «Ազատութիւն կամ մահ» եւ այսպէս, Հայ ժողովուրդն էր որ յաղթանակեց, ոչ թէ Աւարայրի «բարոյական յաղթանակ»-ի կոչումովը, այլ՝ իսկական-ռազմական մեծագոյն յաջողութիւններով:

Այս յաղթանակին յաջորդեց հռչակումը Հայաստանի Ա. Հանրապետութեան: Ունեցանք իրաւական սահմաններ, մեր պատմական հողատարածքին հազիւ 5 առ 100 հողատարածքին վրայ:

Առանց Ա. Հանրապետութեան մենք պիտի չունենայինք Բ. եւ անոր յաջորդող Գ. Հանրապետութիւնները:

Այս է պատմութիւնը, 100-ամեայ կենսագրութիւնը հայ ժողովուրդի արեւելեան հայրենական հողին վրայ ծնած ու կենսագործած հայրենի պետականութեան:

Իբրեւ «Շարքային Հայ» անհատ, առանց կուսակցական-միութենական պիտակաւորումի, քաղաքական ողջախոհութեամբ եւ արիութեամբ մեր սեպուհ պարտականութիւնն է տեր կանգնիլ մեր ազգային արժէքներուն:

Որո՞նք են մեր ազգային արժէքները.



1.- Հայաստան եւ Արցախ, մեր քաջամարտիկներու արիւնով շահուած եւ պահուած միւնչել օրս:

2.- Հայրենի ժողովուրդին կենսունակ եւ անվտանգ բնակութիւնը իր ՀՈՂին վրայ: 1991-ին խորհրդային կարգերը փոկ կու գային եւ իւրաքանչիւր հանրապետութիւն կը ստանար իրաւականօրէն իր անկախ ու ինքնիշխան իրաւակարգը, Բ. Հանրապետութիւնը իր յաջորդներուն ժառանգ թողուց շուրջ 3.800.000 հայ ազգաբնակչութիւն: Դժբախտաբար, քառորդ դարու ընթացքին, սպիտակ արիւնահոսութիւն կոչուող արտագաղթը նօսրացուց նորանկախ Հայաստանի բնակչութեան շուրջ մէկ-երրորդ համեմատութիւնը:

Միւնչդեռ, մեր կարգախօսը պէտք էր ըլլար «Մի քեր հայրենի տունը»: Գեղեցիկ մտածում է ըսել «Արի տուն», որուն գործադրութիւնը կը պահանջէ գերլարումը մեր կարելիութիւններուն ու ֆինանսական հսկայ կարողութիւններու:

Այսուհետեւ, պիտի ըլլանք գործնապաշտ եւ առարկայական: Ազգակերտում-հայրենաստիութիւն եւ ոչ թէ պարզօրէն ըսուած «հայրենասիրութիւն»:

Հայաստանի մայրաքաղաքը իր գեղատեսիլ վայրերով կը մրցի աշխարհի որեւէ նշանաւոր քաղաքի հետ: Մեծագոյն վտանգը՝ Հայաստանի գիւղերուն անհոգատար վիճակն է:

Արեւաշող Հայաստանի արեգակնային հզօր ներուժը մոռացութեան տրուած էր քառորդ դարէ ի վեր, եւ այժմ՝ նոր է որ կը մտածուի գործնականացնել գայն, մեր հայրենիքի ամբողջ տարածքին:

3.- Արեւմտահայերէն լեզուի եւ մշակոյթի, գրականութեան ու գեղարուեստի նկատմամբ որդեգրել պետական պաշտպանութիւն եւ հոգածութիւն:

Եթէ սովետահայ վարչակարգը բռնօրէն խեղաթիւրեց նախասովետական շրջանի արեւելահայ ուղղագրութիւնը, քառորդ դարէ ի վեր ՀՀ պետական եւ ակադեմական շրջանակները ո՞ր օրուան կը սպասեն «Մէկ հայրենիք, մէկ ազգ եւ միաձեւ դասական ուղղագրութիւն» կարգավիճակին յանգելու համար:

Արդ, եկած է ժամանակը, —թէեւ «ՈՒՇ եւք, բայց ոչ ուշացած»,— պահանջելու մեր ժողովուրդին ուխտը մեր ՀԱԲԱՏԱՍԶ սարին.-

* Անհպելի՛ր ու պարտադիր՝ Է՝ ՄԻԱՑԵԱԼ ՀԱԲԱՏԱՍԶով ներկայանալ Միջազգային դատական ատեանին, յանճն մեր Համազգային պահանջատիրութեան:

* Անհրաժեշտ է վերակազմակերպել Սփիւռքի թէ Հայրենիքի մտաւորական ու քաղաքական յանձնառութեան տէր Մարդուժը:

* Արցախի իրողական Անկախ կարգավիճակը օժտել իրաւական հիմունքներով:

* Վերջ տալ անհատական թէ հատուածական համակրանքներու եւ հակակրանքներու պատճառած երկփեղկումներուն ու բարձր պահել համահայկականութեան մեր արժանապատուութիւնը: Եւ այս՝ թէ՛ ի հոգեւորս եւ թէ՛ աշխարհականօրէն:



Եթէ Մենատիրութիւն մը անհրաժեշտ է, այդ մէկը թող որ ըլլայ բարոյագիտական ու համահայկական մեր սկզբունքներու հիման վրայ: Հաւատքն ու Յոյսը կ'առաջնորդեն մեզ: Ամանորի սեմին, կը հաւատանք... թէ յոյսի եւ լոյսի ճառագայթումներ՝ համայն աշխարհի մարդկութեան կը բերեն նորանոր խոստումներ, կու տան աւետիսը կարելի իրագործումներու եւ այս ակնկալութիւններով ահաւասիկ, մենք կը թեւակոխենք նոր տարեշրջան մը եւս: Մարդկութիւնը յուզող առաջին հիմնահարցը՝ անհատաբար թէ հաւաքաբար, իր կեանքին բարօրութիւնն է. ըմբռնելով աշխարհի բարիքներուն, ծնունդը գեղեցիկ ու վսեմ մտածումներու եւ իտեալներու եւ իրականացումը իր անաւարտ իղծերուն:

Ահա թէ ինչու՝ Տարեվերջն ու Ամանորը կը համարենք նախաշաւիղ՝ պատասխանատուութիւններու գիտակցութեան, եւ գերլարումին՝ մեր հոգեկան կորովին ու կարելիութիւններուն:

Այս մտածումներով կը փակենք Ամանորեան մեր խոհերը, որպէսզի կարենանք պայծառ ու յստակ դարձնել կեանքի մէջ այն միակ ճշմարտութիւնը, որ պիտի արձանագրուի էջ առ էջ իբրեւ Պատմութիւն Հայոց: (ՏԵՄ. մեր յօդուածը «Չարթօնք», 30 Դեկտեմբեր 2012):

Պէյրովա,

24 Դեկտեմբեր 2017